№ 275 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 275

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

„ՄՇԱԿԻ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 11-ին ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ կը ներկայացնէ
ԱՊԱՀԱՐԶԱՆԻ ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐ
Կոմէդիա 3 գործ. Բրասոնի և Մարսի, թարգմ. Ա. Արմէնեանի։ Մասնակցում են. տ. տ. Արուսեակ, Գուլազեան, Զաբէլ, Լիսի, պ. պ. Աբէլեան, Արմէնեան. Բերոյեան, Ղազարեան և ուրիշներ։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։ ◆ Տոմսակները 30 կ.-ից սկսած մինչև 1 ռ.։ Հիւրերը՝ յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., իսկ կանայք և ուսանողները՝ 25 կոպ.։
առ. 918. 1—1

Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը յայտարարում է, որ հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակած գումարի տոկոսով պէտք է ուղարկվի արտասահման «հայկական, աստուածաբանական գիտութիւնների մէջ կատարելագործվելու համար» մի հայ լուսաւորչական հոգևորական (արեղայ, քահանայ կամ կուսակրօն հոգևորական), կամ հոգևոր կոչումն ընդունող անձ, որ խոստանում է ծառայել հայ եկեղեցուն և ժողովրդին Կովկասեան շրջանում, Թիւրքիայում կամ Պարսկաստանում։
ա) Ցանկացողները, համաձայն կտակի, աւարտած պէտք է լինեն Գէորգեան Հոգևոր Ճեմարանի դասընթացքը։
բ) Խնդրագրի հետ պէտք է ներկայացնեն իրանց աւարտման մրցագրի վաւերացրած պատճէնը։
գ) Ճեմարանի մանկավարժական խորհուրդը նախապատւութիւն կը տայ աստուածաբանութիւն, պատմութիւն, լեզուագիտութիւն, գրականութիւն, երաժշտութիւն և իրաւագիտութիւն (մասնագիտօրէն եկեղեցական իրաւունք) ուսումնասիրել ցանկացողներին։
դ) Որոշված է տարեկան տալ 800 րուբլի։
Մինչև առաջիկայ 1913 թ-ի փետրվարի 1-ը Ճեմարանի Վարչութեան հասած խնդիրները միայն քննութեան կառնվեն։
Տեսուչ Ճեմարանի՝ Բագրատ վարդապետ
(հ. կ.) առ. 920. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Աւագների Խորհուրդը խնդրում է ա. տ. անդամներին և [illegible] վերանորոգել իրանց տոմսակները 1913 թ. համար։ Վերանորոգման վերջնական ժամանակամիջոց նշանակված է դեկտեմբերի 14-ը։ Ժամանակին չը վերանորոգողները տուգանք են վճարում 8 րուբլի (§ 15 Ժող. Կան.)։ Գրասենեակը բաց է ամեն օր երեկ. ժամը 8 - 10-ը։
(1, 6, 11, 14) առ. 878. 5—4

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, դեկտեմբերի 11-ին
Դերասան Ց. ՍՏԵՓԱՆԵԱՆԸ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ԴԵՐԱՍԱՆ-ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԻ
կը ներկայացնէ
I
◆ Անմահ երգիծաբան Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ ◆
ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ
Կոմեդ. 3 գործ. փոխադրութիւն
Ա. ՍԱՐԴԱՐԵԱՆԻ
II
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ
Վօդևիլ 1 գործող. փոխադրութիւն
Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
Տեղերի գները սովորական են ◆ Տոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում առաւ. ժ. 11-3-ը, երեկ. 6—8-ը։
Սկիզբն է երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։
Ռեժիսեօր՝ Ց. Ստեփանեան
(ն.) առ. 917. 2—2

Լոյս տեսաւ
«Աղբիւր-Տարազի» հրատարակութեամբ
Աւետիք Արասխանեանց
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամենավերջին լուսանկարով եւ ինքնագիր մակագրութիւններով։
Գինը 20 կոպ.
12 հատը 2 ր., 25-ը՝ 4 ր., 100-ը 15 ր.։
Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр. 41.
(չ.հ.շ.կ.) 26. 5-1

Լոյս տեսաւ
Բժշ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑԻ
6-րդ տպագրված աշխատութիւնը
ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕԶ
ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ։
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։ Գինն է 30 կոպ.։ Գրավաճառանոցներին 25% զեղչ։ Դիմել հեղինակին՝ Բէբուտովսկայա փողոց № 23.
(օ.մ.) առ. 908. 5—2

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս Թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Ռուբչնեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը)։
(և. հ. կ.) առ. 746. 100—30

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Երաս-Երաղսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(և.հ.կ.) առ. 849. 100—9

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
8 և 9 դեկտեմբերի

Լոնդոն.—Թագաւորը ընդունեց բոլոր պատգամաւորներին Բուկինհէմի պալատում Գրէյի ներկայութեամբ։ Ունկնդրութիւնը տևեց կէս ժամ։

Դեկտ. 8-ին, ցեր. ժ. 3 ու 50 ր. Սէնտ-Ջէմի պալատում ժողովվեցին բոլոր պատգամաւորները։

Թիւրք պատգամաւորներին լրացուցիչ հրահանգներ բերած սուրհանդակը Բ. Դրան իւրիսկօնսուլտ Ապրօ էֆէնդին թւում է իբրև խորհրդատու թիւրքական պատգամաւորութեանը կից՝ մինչև բանակցութիւնների վերջը։

Հաշտութեան կոնֆերենցիայի նիստը վերջացաւ երեկ. ժ. 6-ին։ Քննվեցին յոյն-թիւրքական զինադադարին և Ադրիանուպոլսին պաշար ուղարկելուն վերաբերեալ հարցեր։ Վիճաբանութիւնները յետաձգվեցին երկուշաբթի օրվան։

Կոնֆերենցիայի այսօրվայ նիստում Թիւրքերը յայտնեցին, թէ պատրաստ են բանակցութիւններ վարել նաև յոյն լիազօրների հետ, սակայն քանի որ անխուսափելի է ընդ սմին երկարել բանակցութիւնների ժամանակը, խնդրեցին յանուն մարդասիրութեան թոյլ տալ ուտելիք հայթայթել պաշարված քաղաքներին։ Դաշնակից պատգամաւորները պատասխանեցին անորոշ։ Թիւրքերն անհրաժեշտ գտան դիմել իրանց կառավարութեան նոր հրահանգներ ստանալու, այդ պատճառով էլ նիստը յետաձգվեց։ Հաւանօրէն դաշնակից պատգամաւորներն այնպէս հրահանգ կը խնդրեն իրանց կառավարութիւններից։

«Իվէնինգ Նիւսը» հաղորդում է, որ ալբանական աւտօնօմիայից և Ադրիատիկ ծովի սերբիական նաւահանգստի վերաբերութեամբ կայացրած համաձայնութիւնից բացի՝ դեսպանների խորհրդակցութիւնը յանգել է համաձայնութեան նաև Եգէյեան կղզիների հարցի առիթով։

—

Լոնդոն.—Բալկանեան պետութիւնների պատգամաւորները ճաշեցին ռուսաց դեսպանատանը։

Պետ. Հեռ. Գործ. Թղթակցի հետ ունեցած զրուցատրութեան միջոցին սերբ և բուլղար պատգամաւորները քիչ յոյս յայտնեցին բանակցութիւնների նպաստաւոր վախճանի վերաբերմամբ։ Ընդհանուրի կարծիքով՝ Թիւրքերը դիտաւորեալ կերպով ձգձգում են բանակցութիւնները, յարուցանելով այնպիսի հարցեր, ինչպէս Ադրիանուպոլսին պաշար հայթայթելու մասին, որոնք դաշնակից պետութիւնների պատգամաւորները լիազօրված չեն լուծել։

Բալկանեան դաշնակիցների յոռետես կարծիքի դիմաց՝ Րէյտէրը յայտնում [illegible] տրամադրութիւնը թւում է լաւատես։

—

Հռոմ.—Իտալիան Լոնդոնի կոնֆերենցիային առաջարկեց տալ Սերբիային գերիշխանութիւն Մեդուայի վրա այն պայմանով միայն, որ երկաթուղին, միացնելով Մեդուան Սերբիայի հետ, մնայ չէզոք։

Փարիզ.—Տեղեակ շրջաններում տեղեկութիւններ են ստացվել, որ Սերբիան միացել է դեսպանների առաջարկութեանը՝ վերաբերեալ Ալբանիային և Ադրիատիկ ծովի սերբիական նաւահանգստին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
8 և 9 դեկտեմբերի

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Եանինայի թիւրքերը, յետ մղելով յոյներին, վերստին գրաւել են Մամալօկաս կիրճը։ Լուլացի կողմից յոյները նոյնպէս պարտվել են։

—

Աթէնք.—Թշնամին, կենտրոնանալով Կորիցում, մի քանի օր առաջ երկու զօրամաս ուղարկեց Բիգլիցա։ Դեկտ. 7-ին յունական զօրքերը գրոհ տուին թիւրքերի վրա, դուրս քշեցին նրանց ուժեղ դիրքերից և հալածեցին մինչև Իգանգօնի։

—

Փիլիպիադա.—Երէկ շարունակվեց կատաղի կռիւ։

Բիզանի ռազմամթերքների պահեստատեղում ընկաւ մի թնդանօթի ռումբ, որ պատճառեց մեծ վնասներ և առաջ բերեց անկարգութիւններ թիւրքական պաշտպանողական գծի վրա։

—

Ուսկիւբ.—Չը նայած զինադադարին, Սկիւտարի զօրաբանակի թիւրք զօրքերը յարձակվում են սերբերի վրա, որոնք դիմադրում են յարձակումներին։ Ենթադրում են, որ թիւրքերը այդ անում են սովից ու այլ դժբաղդութիւններից դրդված։

—

Պոդգորիցա.—Վերջին երեք օրը Բու- ընդհարումներ՝ սերբերի և թիւրքերի միջև։ Երկուստեք վնասները խոշոր են։

—

Աթէնք.—Վերջին երեք օրը յոյները յաղթական կերպով յետ մղեցին թիւրքերի երեք յարձակումները Եանինայի տակ։ Յոյները ստանալով օժանդակութիւն՝ պատրաստվում են գրոհ տալ Եանինայի վրա։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Կ. Պոլիս եկան քիւրդերի պարագլուխները, որոնք յայտնեցին, թէ հայերը պատրաստում են ապստամբութիւն, դնելով աւտօնօմիայի պահանջ։ Քիւրդ պատգամաւորները յարակցեցին, որ եթէ Բ. Դուռը միջոցներ ձեռք չառնէ, այն ժամանակ քիւրդերը իրանք կը պաշտպանեն իրանց ազգութեան շահերը։

—

Րէշիդ-փաշան հայերի դրութիւնը անբաւարար է գտնում։ Սակայն, ասում է նա, քիւրդերի աւազակութիւններն ու կողոպուտները չեն կրում քաղաքական բնաւորութիւն և նրանցից տուժում են նաև մահմեդականները։ Կառավարութիւնը չէ կամենում հանգստութիւն մտցնել և բարենորոգումներ տալ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
8 և 9 դեկտեմբերի

Սօֆիա.—Թագաւորը դիմեց զօրքին մի հրամանով, որի մէջ ասված է. «Զինադադար ստորագրելով աւարտվում է պատերազմի առաջին շրջանը։ Բուլղարիան ընդմիշտ կը պահպանի կռւի դաշտում հերոսաբար ընկած ձեր եղբայրների յիշատակը, ինչպէս և կը յիշէ ձեզ, որ քաջաբար մասնակցում էք այդ կռւին։ Ներկայ և այժմեան սերունդները կը զարդարեն ձեր գլուխը պսակներով։ Օգտվեցէք այժմեան հանգստութիւնից՝ նոր ջանքերի պատրաստվելու համար. այն ժամանակ, ես չեմ կասկածում, դուք կը ծածկէք ձեր դրօշակները նորանոր անթառամ պսակներով»։

—

Աթէնք.—Սալօնիկից հաղորդում են, որ Ֆերդինանդ թագաւորը, ստանալով հեռագիր, երէկ մեկնեց Սօֆիա։ Բորիս և Կիրիլ արքայազնները մեկնում են այսօր։

2000 թիւրք ժանդարմ ուղարկվեցին Փոքր Ասիա։

Մամուլը ընդգծում է, որ Ֆերդինանդ թագաւորի Սալօնիկ գնալուց յետոյ՝ յոյն-բուլղարական յարաբերութիւնները բարելաւվել են։

Հրատարակվեց զօրքի գլխաւոր շտաբի պետի հաղորդագրութիւնը գերի թիւրքերի ռոճիկների մասին, որոնց թիւը աւելի քան 31,000 է. Թիւրք գեներալների և օֆիցերների ռոճիկների համար յատկացվում է նոյն գումարը, ինչ որ տրվում է յոյն զօրքի զօրականներին։ Կառավարութիւնը աշխատանքի ազատութիւն է տուել գերիներին՝ չը հարկադրելով նրանց աշխատել իր հայեցողութեամբ։ Գերիների սանիտարական դրութիւնը միանգամայն բաւարար է. հիւանդների թիւը կրճատվել է։

—

Սօֆիա.—Ֆերդինանդ թագաւորը վերադարձաւ։

Ազգային ժողովին ներկայացվեց ժամանակաւոր բիւջէ դեկտ. 15-ից մինչև մարտի վերջը 7 միլիօն ֆրանկ գումարի։ Ֆինանսների մինիստրը յայտնեց, որ պատերազմի պատճառով եկամուտները կը կրճատվեն 25 միլիօնով, բայց բիւջէի հաշուեկշիռն առանց դեֆիցիտի է։ Պետական գանձատան դրութիւնը, չը նայած պատերազմին, միանգամայն բաւարար է շնորհիւ ֆինանսական գոհացուցիչ դրութեան։ Զօրքը ամեն ինչ ունի և կարող է պատերազմը շարունակել, եթէ հարկ լինի, դարձեալ 6 ամիս (բուռն ծափահարութիւն)։

—

Ուսկիւբ.—Անցան Բուլղարիա բուլգարական գահաժառանգ Բորիսը և իշխան Կիրիլը։ Կայարանում դիմաւորեց սերբիական գահաժառանգը։

—

Կ. Պոլիս.—Լուրերի համաձայն, կաբինետի անդամների մէջ լուրջ տարաձայնութիւն կայ հաշտութիւն կապելու հարցերի առիթով։ Յամառ կերպով խօսում են, որ այդ տարաձայնութիւնը կարող է առաջ բերել Քեամիլ-փաշայի անկումը, որին յետոյ կը փոխարինէ Մահմուդ-Շեվքէթ փաշան։

Վիէննա.—«Կոր. Բիւրօն» հաղորդում է, որ «Զիւտ-Սլավիշէ-Կոր.» Ցէտինիէից՝ չեռնոգորական կառավարութեանը մօտ կանգնած աղբիւրից տեղեկութիւն է ստացել, որ երկրում տիրում է դժգոհութիւն և ընդհանուր հիասթափութիւն, որովհետև ժողովրդի յոյսերը, թէ Սկիւտարն անձնատուր կը լինի, ի դերև ելան. հասարակական կարծիքը պահանջում է շարունակել պատերազմը մինչև Սկիւտարի անկումը, չը նայած դիպլօմատիական բանակցութիւններին։ Այս տրամադրութիւնը, սակայն՝ կապ չունի դինաստիայի դէմ սկսված շարժման հետ, որ բղխում է պատերազմի սկզբում վերադարձած գաղթականներից։

Լրագիրների ասելով՝ նախկին զինուորական մինիստր Աուֆէնբէրգը նշանակվելու է զօրքի տեսուչ, գեներալշտաբի նախկին կառավարիչ Շէմուան՝ 16-րդ զօրաբանակի հրամանատար, որի գլխաւոր շտաբը գտնվում է Րագուզում։

—

Վիէննա.—«Կոր. Բիւրոյին» հեռագրում են Բելգրադից. «Պաշիչը սեփական նախաձեռնութեամբ այցելեց աւստրո-ունգարական դեսպանին և անկեղծ ցաւակցութիւն յայտնեց սերբիական կառավարութեան կողմից՝ մի քանի զինուորական իշխանութիւնների անկանօն գործողութիւնների առիթով հիւպատոս Պրօխասկիի նկատմամբ։ Այդպիսով միջադէպը կարող է հարթված համարվել բաւարար մաքով։

Աւստրիական մի քանի օրաթերթ յարձակվում են արտաքին գործերի մինիստրութեան մամուլի բիւրոյի վրա, որ Պրօխասկիի գործից լուռ ուղտ շինեց։

Մուկդէն.—Պեկինի առևտրական պալատը հրահանգագրեց Մանջուրիայի առևտրական ընկերութիւններին յատկացնել 1912 թ. օգուտից այն ֆօնդին, որ կազմված է Ռուսաստանի դէմ պատերազմ սկսելու նպատակով։

—

Տօկիօ.—Ծովային մինիստրի հրաժարականը չընդունվեց։

Հրաման արձակվեց նշանակել դեկտ. 5-ի հեռագրում նշանակված մինիստրներին։

—

Բրիւսէլ.—Պալատը որոշեց 1913 թ. զօրքի թիւը 100,000 մարդ։

—

Կաասու.—Զօրքի մէջ 24 հոգին հիւանդացան տիֆով։ Երկիւղ կայ, որ Մայն գետը վարակված է տիֆի բացիլներով։

—

Դերբէնդ.—Ջրասոյզ եղան աւելի քան 60 նաւակ լուղորդներով։ 4 մարդ ազատվեցին։

ՊՈՒԱՆԿԱՐԷԻ ՃԱՌԸ ՖՐԱՆՍ. ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 դեկտեմբերի

Փարիզ.—Պատգամաւորների պալատը և սենատն ընդունեցին երկու ամսվայ ժամանակաւոր բիւջէն։

Պուանկարէն արտաքին քաղաքականութեան մասին ասաց հետևեալը. «Մենք աշխատեցինք Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև մշտական համաձայնութիւնը պատրաստել եւրօպական մեծ պետութիւնների ընդհանուր համերգում (ծափահարութիւն)։ Կարծում եմ, որ աւելորդ է ասել, որ մենք տարրական պարտականութիւն ենք համարում ցոյց տալ մեր դաշնակցին իրական ու ակտիվ բարեկամութիւն (երկարատև ու բուռն ծափահարութիւն)։ Մեր աշխատակցութիւնը դիւրացաւ սկզբունքային չափաւորութեամբ, որի նոր ապացոյցը տուեց ստատս-սեկրէտար Կօկօվցէվը։

«Մեր յարաբերութիւնները Անգլիայի հետ երբէք չեն եղել աւելի սերտ ու վստահութեամբ ներշնչված, ինչպէս այժմ։ Մենք հետևում էինք դէպքերի ընթացքին դաշնակիցների և բարեկամների լիակատար համաձայնութեամբ»։

Խօսելով Ռուսաստանի և Ֆրանսիայի առաջ մղած անշահախնդրութեան բանաձևի մասին, Պուանկարէն ասաց. «Բոլոր բալկանեան պետութիւնները ճշդութեամբ գնահատեցին այդ բանաձևի նշանակութիւնը, բոլորն էլ մեզ երախտապարտ էին. ոչ մինը այդ պետութիւններից չէր կարծում, թէ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան կը թողնեն նրանց շահերը առանց պաշտպանութեան»։

Դիմելով դեսպանների վեհաժողովը գումարելու անգլիական նախաձեռնութեանը, Պուանկարէն յայտնում է. «Խորհրդակցութիւնը գտնում է, որ նրան աջողվեց վերացնել եւրոպական տարաձայնութիւնների գլխաւոր պատճառներից մինը։ Ալբանական աւտոնոմիան լինելու է Թիւրքիայի գերիշխանութեան ներքոյ և գտնվելու է բոլոր մեծ պետութիւնների հսկողութեան տակ։ Սերբիային տրվող նաւահանգիստը ազատ լինելու է չէզոք։ Բացի դրանից՝ Սերբիան օգտվելու է մաքսային ազատութեամբ։ Յանուն եւրոպական խաղաղութեան անհրաժեշտ է չը մերժել նրան միջոցներ տալ ապրելու և ազատ շնչելու։ Բանակցութիւնների խզման դէպքում Եւրոպան հաւանօրէն կը դիմէ միջնորդութեան։ Մենք քանիցս ապացոյցներ ենք տուել մեր խաղաղասիրութեան, բայց և անտասան է մնում մեր վճիռը՝ հաստատապէս պաշտպանելու մեր շահերն ու իրաւունքները և պահելու Ֆրանսիայի տրադիցիաները Արևելքում, պահպանելով ամենից առաջ ազգայնութիւնը և պատիւը իբրև անձեռնմխելի ու սրբազան» (երկարատև ծափահարութիւն բոլոր աթոռներում, բացի ծայրայեղ ձախակողմից)։

Պալատի նիստից Պուանկարէն գնաց սենատ, ուր յայտարարութիւն արաւ արտաքին քաղաքականութեան մասին, ըստ որում ի միջի այլոց ասաց. «Ֆրանսիան բաղդաւոր կը զգայ իրան շարունակելու տրադիցիոն լաւ յարաբերութիւնները Թիւրքիայի հետ։ Դժուարութիւններից խուսափելու համար՝ Թիւրքիան պէտք է ունկնդրէ իր պետութեան մի քանի ժողովուրդների գանգատներին։ Ֆրանսիան մտադիր է հարկադրել յարգելու իր շահերը Լիբանանում և Սիրիայում։ Անգլիան իր կողմից համամիտ է դրան»։

Պուանկարէի ճառը մի քանի անգամ ընդհատվեց բուռն ծափահարութեամբ։

Պուանկարէի ճառը գտաւ ընդհանուր համակրութիւն, մանաւանդ Ռուսաստանի և Ֆրանսիայի բարեկամութեան առիթով։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 24 նոյեմբեր

Թիւն մը կը տիրէ բոլոր բնակչութեան վրայ։ Մարմարայի բոլոր արուարձաններու բնակչութեան մէկ մեծ մասը, բուլղար բանակին Չաթալջա հասնելէն յետոյ, իրենց տուները լքանելով մեկնած էին Վոսփորի ասիական գիւղերը, քաղաքին հաւանական գրաւման առեն՝ պատերազմին սովորական վտանգներէ զերծ մնալու համար։

Փախուստը, որ խուճապային հանգամանք ունէր, խեղճութեան կը մատնէր խաղաղ ու անմեղ բնակչութիւնը, որ կերթար ապաստանիլ շատ անգամ այնպիսի տեղեր, ուր ձմրան այս եղանակին բնական է թէ պիտի տառապի գաղթականի սովորական զրկանքներովը։

Սակայն այս փոքր թշուառութեան հետ բաղդատելով՝ այն մեծագոյն դժբաղդութիւնը, որուն ենթարկուած են Ռումելիի իսլամ գաղթականները, շատ աննշան կը մնայ։

Կ. Պոլսոյ գրեթէ բոլոր պողոտաներուն վրայ պիտի հանդիպիք անոնց, կիսամերկ, բոկոտն, ու դողդոջելուն, որոնք սայլի մը եզերքներէն վար կախուած, ցամաք հացի շերտերու վրայ ինկած են և անյագօրէն կուտեն։

Այդ սայլը բովանդակ հարստութիւնն է իրենց։ Անոր մէջ ամփոփուած են քանի մը շատ նախնական կարասիներ՝ ամբողջ գոյքը խեղճ գիւղացիին — և իր կիներն ու կիսամերկ տղաքը, որոնք իր գոյքերէն նուազ արժէքաւոր կը նկատէ — կը գաղթէ, առանց գիտնալու ստուգօրէն թէ դէպի ուր կերթայ։

Այսպէս՝ սայլերու անծայրածիր շղթայ մը միշտ պիտի տեսնէք Պոլսոյ փողոցներուն մէջ։ Անոնցմէ շատերն իրենց այդ տառապալից ճամբորդութեան մէջ, որ այս ցուրտին և ձիւնին կը կատարեն, աղտեղութեան ու կեղտերու մէջ, արդէն ինքնին կը կազմեն բոյն հիւանդութեանց, որոնք Կ. Պոլսոյ մէջ կը տարածուին։

Բոլոր մզկիթները լեցուած են գաղթականներով և քոլերային վարակեալ զինուորներով, որոնց վիճակը ոչ նուազ խեղճ է, քան այդ գաղթականներունը։

Քոլերան մեծ աւեր կը գործէ, և հիմա քաղաքին մէջ մերձաւորապէս օրական 100 դէպքեր կը պատահին։

Իբր մաքրանոց ծառայող մզկիթներու մէջ դրուած զինուորները, զուրկ ամեն նախազգուշութենէ և նոյնիսկ անկողինէ ու վերմակէ, կուտան մարդկային զոհեր։

Շատ անգամ կառավարութիւնը անկարող կըլլայ անոնց հայթայթելու ուտելիք, և անոնք մարմարներու վրայ կը գիշերեն անօթի ու ծարաւի։ Պատերազմը բացարձակապէս կարգիլէ կառավարութիւնը զէթ ձեռնարկելու նախնական միջոցներ՝ համաճարակի դիմադրելու։

Քաղաքը հիմա, հազիւ ազատուած պատերազմին վտանգներէն, համաճարակի վտանգին տակ կը գտնուի, և երկիւղ կայ, որ աւելի մեծ համեմատութիւններ առնէ այն, քանի որ նոր որոշման մը համաձայն՝ գաղթականներն ասիական գաւառները խրկելու որոշումը առկախուած է, և Կ. Պոլիս կը պահուին։

Թիւրք լրագիրները մասնաւորապէս ինքզինքնին ամօթապարտ կը զգան գաղթականաց վիճակի վրայ։ Լրագիր մը գրած էր, թէ անոնք Ասիա կը վերադառնան ճիշդ այն վիճակին մէջ, ճիշդ այն նախնական և ողորմելի վիճակին մէջ, որ էին ասկէ 500 տարի առաջ՝ երբ Եւրոպա անցան։

Ասիկա շատ յատկանշական խոստովանութիւն մըն է, որ կը յայտնէ, թէ Թիւրք տարրը բնաւ ընդունակ չէ քաղաքակրթութեան, այլ միշտ քանդելու և փչացնելու։

Գիւղացիներու այս թափօրը նոյն ինքն Թիւրք ազգին հոգեբանութիւնը և պատկերը կը ներկայացնէ։

Հիմա, որ ժողովուրդը քիչ շատ ապահովութիւն կը ստանար, հիմա ալ Կ. Պոլիս կը դառնայ աղտաբոյր և մահաբոյր վիճակ մը։

Վերջապէս Թիւրքիոյ մէջ բնաւ հանգիստ չկայ, և ամեն առեն կեանքի և մահու մէջ կը տարուբերին մարդիկ։ Շառօյլ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, դեկտեմբերի 9-ի առաւօտը սկսվեց ձիւնով, որը սակայն շատ շուտ վերջացաւ և տեղի տուեց արևոտ, թէև սառն օդով օրվայ։

Դեռ առաւօտեան ժամը 9-ի մօտերը երկաթուղու կայարանում ժողովվել են թաղման կարգադիր յանձնաժողովի անդամները և րոպէ առ րոպէ սպասում են Բաթումի գնացքին, որի վագոններից մինում դրված պէտք է լինէր Արասխանեանի դագաղը…

Ժամը 9-ին 10 րոպէ պակաս՝ գնացքը կանգնած է մեր առաջ։ Մօտենում ենք կարմիր վագոնին և դուռը բանալով վայր իջեցնում դագաղը։ Եւ այն դնելով դիակառքի վրայ, դիակառքը դիմում է դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։

Յանձնաժողովի անդամների հետ են նաև հանգուցեալի կինը, 12-ամեայ միակ աղջիկը և մի երկու ազգական։

Սգերթը երեք-քառորդ ժամից յետոյ հասնում է Մողնու եկեղեցին, ուր և պատարագ է մատուցվում։ Եկեղեցին և բակը շուտով լցվում են հանգուցեալի յիշատակը յարգողների մեծ բազմութեամբ, որի մէջ են Թիֆլիսի համարեա բոլոր հայազգի կուլտուրական, բարեգործական, կրթական հաստատութիւնների ու հիմնարկութիւնների ներկայացուցիչները։

Եկեղեցում երգում էր Կ. Հ. Բարեգ. Ընկ. Խուդադեան որբանոցի սաների երգեցիկ խումբը։ Այդ օրը Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը անկարող եղաւ մասնակցել Արասխանեանի թաղմանը, որովհետև երգում էր Վանքի աւագ-եկեղեցում Հայրապետական կոնդակի ընթերցման առիթով։

Եկեղեցին լի էր երկսեռ խուռն բազմութեամբ, որին դիմելով պատարագիչ Սիմ. հանգուցեալի մասին։

Ժամը 12-ից անց աւարտվում է պատարագը և դագաղը դուրս բերվելով բակը՝ դրվեց սեղանի վրայ։ Խորհրդաւոր լռութեան մէջ թաղման կարգադրիչ յանձնաժողովի և Հայ Գրողների Ընկերութեան վարչութեան անդամ Ա. Աթանասեան ասում է.

«30-ամեայ գրական գործիչ և ազնիւ հրապարակախօս, Ջաւախքի բարձունքներից ժողովրդի ներկայացուցիչները և հայ հասարակութեան բոլոր խաւերի անձինք եկել են այսօր իրանց վերջին հրաժեշտը տալու քո աճիւնին։ Երեսուն տարի շարունակ գործելով հայ իրականութեան մէջ, քո անձի վրա կրեցիր նրա բոլոր տատասկները։ Դու հայ գրողի խղճական տիպարն էիր։ Աւարտելով արտասահմանում բարձր ուսումը, դու գերադասեցիր հայրենիք վերադառնալ և քեզ նուիրել քո ժողովրդի առաջադիմութեան գործին։ Սակայն այդ հայ գրականութիւնը քեզ հասցրեց մինչև Ջաւախք։ Գրիգոր Արծրունուց յետոյ գուցէ միակը դու եղար, որ այնպէս ջերմ կերպով, վառ սիրով նուիրվեցիր հրապարակախօսութեան ասպարէզը, որը և քեզ գերեզման իջեցրեց»։

Ապա Աթանասեան դառն խօսքերով յիշեց, որ հանգուցեալը 18 տարի շարունակ փայփայում էր Հայ Գրողների Ընկերութիւն հիմնելու միտքը, որը այսօր արդէն իրականացած է, բայց որն այսօր իր առաջ դրված է տեսնում Արասխանեանի սառը մարմինը… Ընկերութիւնը իր խորին յարգանքն է մատուցանում շիտակ հասարակական գործչին և ազնիւ հրապարակախօսին։

Երկրորդը խօսեց հանգուցեալի մօտիկ ընկեր Գր. Վարդանեանը, որ յիշատակեց Արասխանեանի արտասահմանեան օրինակելի ուսման շրջանը։ Աւարտելուց յետոյ, պրոֆ. Շմոլլեր առաջարկում է հանգուցեալին մնալ Գերմանիայում, բայց Արասխանեան եկաւ իր հայրենի երկիրը գործելու իր ժողովրդի համար 1882 թ. սկզբում մանկավարժ, յետոյ գիտնական և հրապարակախօս։ Վարդանեան առանձնապէս շեշտեց այն հանգամանքը, որ Արասխանեան զոհ գնաց հայ իրականութեան կիսակիրթ բարքերին ու պայմաններին։ Սակայն ապագայ պատմաբանը իր արժանաւոր տեղը կը տայ անկաշառ հրապարակախօսին։

Դագաղը դրանից յետոյ վերցրին թաղման յանձնաժողովի անդամները և իրանց ուսերի վրայ տարան բաւական տարածութիւն, որից յետոյ դրվեց դիակառքի վրայ։ Յուղարկաւորութեանը մասնակցում էր մեծ բազմութիւն, որ աւելի ստուարացաւ Վանքի եկեղեցում պատարագը և Հայրապետական մաղթանքը վերջանալուց յետոյ, երբ այնտեղ գտնվողներից շատերը շտապեցին յարգել հանգուցեալի յիշատակը։ Գերեզմանատանը դագաղը հողին յանձնելուց առաջ դամբանականներ խօսեցին Յ. Սպէնդիարեան «Մշակի» խմբագրութեան և իր կողմից, Ա. Յարութիւնեան «Հորիզոնի» խմբագրութեան կողմից, մի աշակերտ «Պատանի» ամսաթերթի կողմից, Մ. Պետրոսեան արհեստաւորների նախկին «Մուրճ» ընկ. կողմից և Ախալքալաքի պատգամաւորներից Ջալալ Տէր-Գրիգորեան։

Մեծ տպաւորութիւն գործեց Յ. Սպէնդիարեանի հետևեալ ճառը.

«Այն հասարակական շարժումը, — ասաց նա, — որը բուռն կերպով առաջ եկաւ Աւետիք Արասխանեանի մահով, ցոյց է տալիս, թէ ինչ նշանաւոր գործիչ է կորցնում հայ ժողովուրդը յանձին հանգուցեալի։

«Հայ հասարակութիւնը զգաց, որ անհետանում է մեր կեանքից մի նշանաւոր մտաւոր ոյժ, մի կարևոր, շիտակ հասարակական գործիչ և հրապարակախօս և, զգալով այդ կորստի դառնութիւնը, նա այսօր զգացված սրտով գալիս է նրա յիշատակին իր սրտաբուղխ յարգանքը արտայայտելու։

«Մեր հայ մտաւորականութեան մէջ Արասխանեանը աչքի էր ընկնում իր նշանաւոր գիտական պատրաստութեամբ, որ նա ստացել էր Գերմանիայում, ուր տարիների ընթացքում նա ուսումնասիրում էր հասարակական գիտութիւնները և քաղաքատնտեսութիւնը։

«Նրան առաջին գնահատողը հանդիսացաւ Ստրասբուրգի պրոֆ. և յայտնի գիտնական Շմոլլերը, որը և առաջարկեց Արասխանեանին մնալ Գերմանիայում գիտական գործունէութեան նուիրվելու համար, բայց հանգուցեալը՝ հրաժարվելով այդ բարձր պատւից՝ շտապեց հայրենիք վերադառնալ՝ իր հարազատ ժողովրդին ծառայելու համար։

«Գերմանացի հռչակաւոր գիտնականի բարձր գնահատութիւնը արդէն իսկ ցոյց է տալիս, թէ ինչ մեծ գիտական պաշարով վերադարձաւ Արասխանեանը իր հայրենի երկիր։

«Նա հայ կեանքում հանդէս եկաւ բազմազան ասպարէզների վրայ՝ իբրև ուսուցիչ-մանկավարժ, խմբագիր-հրապարակախօս և հասարակական գործիչ ու գրող. և այդ բոլոր պաշտօններում երկար տարիներ աշխատելով նա ցոյց տուեց իր մտքի և սրտի անգնահատելի գծերը։

«Իր գիտական պատրաստութեան հետ Արասխանեանը զարմանալի տոկուն և աշխատասէր գործիչ էր. նա գիտէր խորասուզվել աշխատանքի մէջ և ոգևորվել նրանով. այդպէս էր նա իբրև պատմութեան ջերս Գէորգեան ճեմարանում, այդպէս նա մնաց և իբրև հրապարակախօս, գրող և հասարակական գործիչ։

«Նա գիտէր իրան յատուկ բարեխղճութեամբ և շիտակութեամբ լուսաբանել և վերլուծել իւրաքանչիւր խնդիր, լինէր նա հասարակական թէ մասնագիտական, և երբ հայկական ժողովներում նա երբեմն հանդէս էր գալիս իբրև ատենաբանող, նրան ժողովը լսում էր ամենայն հաճութեամբ և հետաքրքրութեամբ։ Նոյն բարեխղճութեան ու ուսումնասիրութեան գիծը նկատվում էր և նրա գրական աշխատութիւնների մէջ. դրա փայլուն ապացոյցը կարող է լինել «Մուրճ» ամսաթերթը, որը սկսվեց հրատարակվել նրա անմիջական ղեկավարութեամբ և մասնակցութեամբ. այդ ամսաթերթը ստեղծեց մեր պարբերական գրականութեան մէջ մի լուսափայլ շրջան, որը յետոյ մի անգամ էլ կրկնվեց հանգուցեալի զինակից Լեւոն Սարգսեանի խմբագրութեան օրով։

«Արասխանեանը ուրոյն, առանձնայատուկ գծերով օժտված մի դէմք է, որը որքան էլ երկար չը դիտես, չես կարող ասել, որ նրան ամեն կողմից ճանաչում ես. այդպիսի դիտողի աչքից, եթէ նոյնիսկ նա սերտ մօտենար Արասխանեանին, այնու ամենայնիւ կը վրիպէր հանգուցեալի այս կամ այն խորը թաքնված հոգեկան գիծը։ Եւ հանգուցեալը երկար տարիներ մեր մէջ գործելուց յետոյ մնաց հայ հասարակութիւնից չը ճանաչված ու գնահատված։

«Անկախ և ինքնուրոյն մտածող՝ նա չէր յարում այս կամ այն կուսակցական հոսանքին, և թերևս դա էր պատճառներից մէկը, որ նա իր կեանքի վերջին ճգնաժամին չը գտաւ արժանավայել պաշտպանութիւն իր նոյնիսկ համեստ դիմումների մէջ, որից յետոյ նա հոգեպէս և նիւթապէս լքված և յետին թշուառութեան հասած հեռացաւ այստեղից գաւառ ուսուցչի համեստ պաշտօնով։

«Դա է մեր կեանքի դառն իրականութիւնը, որը դժբաղդաբար մենք չենք կարող քաւել ոչ փառաշուք սգահանդէսներով և ոչ մեր ճառերով։ Արասխանեանի տարաժամ և ողբերգական մահը կը մնայ հայկական խղճի վրա իբրև մի անսրբելի արատ։

«Իր ճակատագրի դառն բաժակը Արասխանեանը քամեց խսպառ, մինչև վերջին կաթիլը, քամեց հերոսաբար, անմռունչ, առանց գանգատի, լաց ու կոծի։

«Այդպէս ապրում են և այդպէս մեռնում միայն հոգով անբիծ և մտքով վեհանձն մարդիկ»։

Ա. Յարութիւնեան յիշեցնելով, որ «Մեռեալների մասին կամ ոչինչ չը պէտք է ասել, կամ լաւը», ասաց, որ հայը իր մեռեալների մասին պէտք է լայ։ Վերջին օրերի լրագիրների ցաւակցական յօդուածների և հեռագիրների մէջ նա տեսնում է հայի խղճի խայթոցի ձայնը Արասխանեանի մահվան համար։ «Որովհետև կենդանի ժամանակ Արասխանեան մոռացված էր։ Արասխանեանի նման նոր, ինքնուրոյն խօսքը ասողները հայ իրականութեան մէջ մնում են չը գնահատված, և այդ բացասական երևոյթը արգասիք է հայ ժողովրդի դարաւոր ստրկական կեանքի։ Հայ կեանքում ազատ խօսքը ենթարկվել է հալածանքի։ Մեր բարքերը չեն տանում լաւ մտքերը։ Արասխանեան իւրայիններից անուանված էր «չիմոր» որովհետև հայ ապականված մթնոլորտում նա չը կամեցաւ համակերպվել, և… զոհվեց։ Ցանկանք, — վերջացրեց ճառախօսը, — որ Արասխանեանը լինի մեր հասարակական բարքերի վերջին զոհը…»։

Ջալալ Տէր-Գրիգորեան յայտնեց, որ Ախալքալաքի հայ հասարակութիւնը յանձին Արասխանեանի ունեցաւ ծանր կորուստ։ Հանգուցեալը առաջինը արձագանք տուեց հոգաբարձութեան կոչին և երիտասարդի աւիւնով եկաւ Ախալքալաք իր ուսման պտուղներով կրթելու մատաղ սերունդը։ «Նրա ներկայութիւնը մեզ ոգևորում էր, — ասաց ճառախօսը, — սակայն Ջաւախքի սառը կլիման վերջ դրեց նրա կեանքին և Արասխանեանը ընկաւ հեռու գաւառում իբրև ճիւղակտոր կաղնի, իբրև մի հատիկ ծառ։ Ախալքալաքը պատւով դուրս եկաւ իր պարտականութիւնից և կազմեց հասարակական յուղարկաւորութիւն մինչև Բորժոմ՝ Ախալցխայով, ուր և ամբողջ հայութիւնը մասնակցեց իր ներկայութեամբ»։

Վերջում Ջալալ Տէր-Գրիգորեան խնդրեց Թիֆլիսի հայերին հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար նպաստ տալ աւարտելու Ախալքալաքի դպրոցի կիսատ շինութիւնը, որ կանուանվի «Արասխանեան»։

Դամբանականներից յետոյ ընդհանուր սուգի ու վշտի մէջ դագաղը իջեցվեց հողը և մեզանից ընդմիշտ անհետացաւ չարքաշ ապրած, հայ տխուր իրականութեան դառն բաժակը ամբողջովին քամած ազնիւ մարդը, որի հոգին միայն մեզ հետ էր և որի յիշատակը յաւիտեան ապրելու է մեզանում։

Դագաղի վրա դրված էին չորս պսակ՝ երկուսը թարմ ծաղիկներից հանգուցեալի ազգական Մենտոր Բունիաթեանի կողմից, երրորդը Ախալքալաքի հայ համայնքի և չորրորդը նոյն տեղի հայ դպրոցների հոգաբարձութիւնների կողմից։ Ե.

ԱԼ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

(Հեռագրով)

Ախալքալաք, 8 դեկտեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութիւնը ցաւակցելով արժանաւոր հրապարակախօս և «Մուրճի» խմբագիր Արասխանեանի վաղահաս մահը, որոշել է, նրա յիշատակը յաւերժացնելու համար, վճարել հայոց ծխական դպրոցում սովորող աշակերտներից երկուսի ուսումնավարձը և կատարել հոգեհանգիստ։

Նախագահ՝ Դարբինեան

—

(Հեռագրով)

Բագու, 10 դեկտեմբերի

Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը անփոխարինելի կորուստի պատճառով, որ ունեցաւ հայ ազգը և կուլտուրան յանձին մայրենի կուլտուրայի անշահասէր և ազնիւ աշխատաւորի, անխոնջ հրապարակախօսի և «Մուրճի» խմբագրի՝ Ալ. Արասխանեանի։

Գլխաւոր բիւրոյի նախագահ՝
Կ. Խատիսեան

—

Ալեքսանդրապօլ, 8 դեկտեմբերի

Թոյլ տուէք, խնդրեմ, ձեր լրագրի միջոցով յայտնել իմ վշտակցութիւնը Աւետիք Արասխանեանի մահվան առիթով, իբրև «Մուրճ» ամսագրի առաջին տարիների խմբագրական անդամի և հանգուցեալի գրական ընկերակցի 90-ական թւականների սկզբում։ Հայ հրապարակախօսութիւնը և հասարակական կեանքը յանձին Արասխանեանի կորցրեց մի տոկուն, շիտակ և ինքնուրոյնօրէն մտածող գործիչ։

Լեւոն Սարգսեան

—

Հին-Նախիջևան, 7 դեկտեմբերի

Ողբում եմ Աւ. Արասխանեանի վաղահաս, անժամանակ մահը, որպէս անդուգական իդէալիստի, տոկուն ազգային և հասարակական գործչի, եռանդուն հրապարակախօսի մահը։ Երբեք չեմ կարող մոռանալ հանգուցեալին, որ իր վերին աստիճանի, գրեթէ մանկական, միամտութեան հետ ամփոփում էր իր անձի մէջ և բարձր գիտնականութիւն (հայկական մտքով) և գերագոյն համեստութիւն, առաքինութիւններ, որոնցից, դժբաղդաբար, զուրկ են շատ շատերը մեր նորելուկ, նոր ֆորմացիայի գրողներից ու գործիչներից։ Այդպիսի գործիչներին ընդունված է յարգել։ Մենք առաջարկում ենք յաւերժացնել Արասխանեանի յիշատակը որևէ ազգօգուտ գործով, լինի այդ գործը նիւթական թէ մտաւոր, գրական թէ դպրոցական ասպարէզում։ Թող անմահ լինի հանգուցեալի յիշատակը և հողը նրա աճիւնների թեթև։

Արշակ Եղիզարեան

Լոյս տեսաւ «Աւետիք Արասխանեանի ինքնակենսագրութիւնը» «Աղբիւր-Տարազի» № 107-րդ հրատարակութիւն, Արասխանեանի ամենավերջին լուսանկարով և ֆակսիմիլէով։ Գինը 20 կ.։

—

Արասխանեանի դագաղի արկղը Տ. Նազարեանի առաջարկութեամբ թաղման կարգադրիչ յանձնաժողովը որոշեց նուիրել Հայոց Ազգագրական Ընկերութեանը։

—

Դեկտեմբերի 6-ին Մողնու եկեղեցում Աւ. Արասխանեանի հոգեհանգստին ներկայ գտնվեց Թեմիս կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսը։

—

«Бакуъ»-ն հաղորդում է, որ Հայ Գրողների Ընկերութեան անդամներից մի խումբ մտադիր է այս շաբաթ կայացնել երեկոյթ Աւ. Արասխանեանի յիշատակին նուիրված։

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆՈՒՄ

II

Ա. Արասխանեանի յիշատակին

Ընդմիջումից յետոյ շարունակվեց զրոյցը։

Յ. Մալխասեան, նկատելով որ օտար ազգերը ունեն իրանց գրողների և գործողների կենսագրութիւնները, միտք յայտնեց, որ ցանկալի է ունենալ հայ գործողների կենսագրութիւնները՝ Աբովեանի, Պատկանեանի, Պռօշեանի և միւսների, նրանց թւում և Սրուանձտեանի ու Արասխանեանի։

Յ. Սպէնդիարեան. — Արասխանեանի անձնաւորութիւնն այսօր լուսաբանվեց ամեն կողմից։ Ես կանգ եմ առնում մի գծի վրա մեր իրականութիւնից, որ մեր գործողները նահատակվում են։ Ինչու նրանք պէտք է դառնութեան մէջ տապալվեն։ Մեր հասարակութիւնը չափազանց սառն և անողոք է դէպի իր գործողները։ Արասխանեանը Շմոլլերի յատուկ ուշադրութիւնն էր գրաւել և գնահատվել էր. իսկ մենք ինչ արինք նրա հետ։ Ոչ մի ասպարէզում — գրական, մանկավարժական, հասարակական — նա աջողութիւն չը գտաւ և չը գնահատվեց, դռները փակեցինք նրա առաջ։ Նա դիմեց Ներսիսեան դպրոցին վերակացուի պաշտօն ստանալու, այդ էլ մերժեցին։ Այնուհետև նա ստիպված էր դիմել վաճառականներին և նրանցից գործակատարի տեղ խնդրել։ Սոսկալի է այդպիսի իրականութիւնը։ Ես նրան ճանաչում էի իբրև շիտակ և անկախ մարդու և ցաւում էի տեսնելով թէ ինչպէս նրան մատնել են անուշադրութեան։ Վերջին անգամ նա դիմեց ինձ, խնդրելով աջակցել «Մուրճի» հրատարակութիւնը ակցիոներական հիմունքներով։ Եւ դիմումներ արի, որոնք մնացին առանց արձագանքի։

Գ. Վարդանեան (Թիւրքիա). — Ես հազիւ 7—8 տարի է, որ անձնապէս ծանօթ էի Արասխանեանի հետ, բայց աւելի վաղ ճանաչում էի նրա «Մուրճը», որը մենք Թիւրքիայում ստանում էինք դժուարութեամբ և կարդում գաղտնապէս։ Եւ «Մուրճը» մեզ համար ունեցաւ որոշ կրթական նշանակութիւն։ Նրան տեսայ ուսուցչական ժողովում. իբրև ազնիւ, ճշմարտասէր պայքարողի վերջերս նա շատ ծանր վիճակի մէջ էր։ Դիմում էր Բարեգործականին, Արտիստականին, նոյնիսկ երկաթուղու վարչութեան՝ պաշտօն գտնելու և վերջապէս գնաց Ախալքալաք։ Մենք նրան չը պահպանեցինք։

Ատրպետ. — Որքան շատ ենք լսում փաստեր, այնքան աւելի տխուր է ներկայացնում մեր իրականութիւնը։ — Նա գործնական կեանքի մի քանի խելամտութիւնները չունէր, որ ուրիշ աւելի ապահով կացութիւն ստեղծած լինէր իր համար. նա իրանից ժամացոյց գողացողին միայն կարողացաւ այն ասել, որ սա վատ գործ է կատարել։ Այժմեան իրարանցումը նրան հանդիսաւոր թաղելու համար աչք է ծակում, երբ տեսնում ենք թէ ինչպէս ենք մարդուն պահում կեանքի ժամանակ և թաղում մահից յետոյ։ Առաջարկում եմ, որ հասարակութիւնը ինքը վերցնի իր վրա նրա աղջկայ խնամակալութիւնը։

Ակունեան բացատրում է, որ դժբաղդաբար այն տխուր երևոյթը, որ պարզվեց Արասխանեանի վերաբերութեամբ, յայտնի է և հայկական շրջանից դուրս։ Կարծես այդպիսի մարդկանց վիճակված են այդպիսի զրկանքներ։ Լեսինգը մի հարուստ մարդու մօտ գրագիր էր, և երբ նրան հարցրին այդ մասին, նա ասաց, թէ դա բնական է, որովհետև հարուստը ինքը գնահատել չը գիտէ իր գրքերը։ Շվէյցարական պարծանք Գոտֆրիդ Կելլերը 11 տարի հասարակական գրագիր էր։ Իբսէնը գանգատվում է Բրանդէսին, որ մենակ է մնացել. իսկ Բրանդէսը շնորհաւորեց նրան այդ առիթով։ 'Դժբաղդաբար' երևոյթը աւելի տարածված է, քան կարծում ենք, և զրկանքներ կրողը յաճախ իրան աւելի երջանիկ է զգում, քան միւս աւելի ապահով և հարուստ անհատները։ Այստեղ բնութեան օրէնք չէ սահմանված, բայց իրերի տրամաբանութիւնը հասկանալի է դարձնում երևոյթը։

Նախագահ Ա. Քալանթար յայտնեց, որ Սրուանձտեանի մասին զրոյցը տեղի կունենայ մի ուրիշ երեկոյ և այդ մասին կը յայտարարվի վաղօրօք։ Ն—ն

ՅՕԳՈՒՏ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Ստացանք Կարսից, Մաղաք Թաղվերանեանի միջոցով հաւաքված 5 րուբլի։ Նախկին ստացած 10 րուբլու հետ միասին (տես «Մշակ» № 269) ունենք ընդամենը 15 րուբլի։

ՅՕԳՈՒՏ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ

Ստացանք Վիէննայից՝ Գ. Սմաւոնեանից 5 րուբլի։ Նախկին ստացած 17 րուբլու («Մշակ» № 269) հետ միասին ունենք ընդամենը 22 րուբլի։

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 7 դեկտեմբերի

Նախագահում է Ակիմովը։

Կառավարական օթեակում in corpore մինիստրների խորհուրդն է ստատս-սեկրետար Կոկովցեվի գլխաւորութեամբ։ Հասարակութեան համար յատկացված օթեակները լի են։

Մինիստրների խորհրդի նախագահը մի ժամ տևող ճառից յետոյ կարդում է կառավարական այն դեկլարացիան, որ դեկուցվեց Պետական Դումայի դեկտ. 5-ի նիստում։ Վերջում Կոկովցեվը դարձեալ շեշտում է, որ կառավարութիւնը պատրաստ է աշխատել ձեռք ձեռքի տուած օրէնսդրական հաստատութիւնների հետ՝ պետական և հասարակական կեանքի կարգաւորման համար։

Կոկովցեվի ճառը լսելուց յետոյ Խորհուրդը 76 ձայնով ընդդէմ 59-ի ընդունում է հետեւեալ բանաձևը, որ առաջարկված էր 64 հոգուց. «Մինչև վերջ լսելով կառավարութեան հաղորդագրութիւնը և ընդունելով, որ մեր հայրենիքի պատմական պատգամներն ու կենսական շահերն ապահովելու և նրա պատիւն ու արժանիքը հնարաւոր ձեռնմխելիութիւնից ամեն կերպ պաշտպանելու նպատակով օրէնսդրական մարմինների առանձին ուշադրութիւնը և հոգատարութիւնը իրանց առաջիկայ աշխատանքներում պէտք է նուիրված լինեն այնպիսի միջոցների, որոնք ուղղված լինեն կատարելագործելու և զարգացնելու պետութեան զինված ոյժերը, բարելաւելու նրանց կազմակերպութիւնն ու կազմը և զինելու մեր զօրքն ու նաւատորմը լայն չափերով բոլոր ժամանակակից տեխնիկական յարմարութիւններով, Խորհուրդը իր պարտականութիւնն է համարում աջակցել կառավարութեան օրէնսդրական ձեռնարկութիւններին այդ առարկաների և այն նախագծերի վերաբերութեամբ, որոնք նպատակ ունեն բարձրացնել ազգաբնակութեան բարեկեցութիւնը և ամրապնդել նրա միջավայրում կարգ ու կանոն, հանգստութիւն ու օրինականութիւն, և անցնում է հերթական գործերին»։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Մինիստրների խորհրդի նախագահի ճառը*)

Պետերբուրգ, 6 դեկտեմբերի

Վերջին հարցը, որի վրա ես անհրաժեշտ եմ համարում ձեր ուշադրութիւնը դարձնել, վերաբերում է մի խնդրի, որը, ես հաւատացած եմ, հաւասարապէս մօտ է ձեզանից իւրաքանչիւրի սրտին։ Խօսքս պետական պաշտպանութեան հարցի մասին է։ Ձեր նախորդը՝ երրորդ Դուման, իր պարտականութեան խորին գիտակցութեամբ Թագաւորի և հայրենիքի առջև, իր աշխատանքների մէջ առաջնակարգ տեղերից մէկը յատկացրեց նրան։ Նրա վերջին գործողութիւններից մէկը 5-ամեայ նրա պարապմունքների աւարտման միջոցին՝ այն էր, որ հաւանութիւն տուեց մեր ծովային նաւատորմիղը վերակազմելու համար միջոցներ յատկացնող կառավարական օրինագծին։ Կառավարութիւնը յոյս ունի, կասեմ աւելին՝ հաւատացած է, որ չորրորդ Դուման նոյնպիսի վերաբերմունք ցոյց կը տայ դէպի այն հարցերը, որոնք նրա լուծմանը կառաջարկվեն։ Կատարելով միապետի հրամանը, կառավարութիւնը այստեղ կը բերի հանգիստ կերպով այն բոլորը, ինչ որ ձեր քննութիւնն է պահանջում և արդարացնում է մեր սպառազինված ոյժերը կազմակերպելու անհրաժեշտութիւնը, հաւատացած լինելով որ ձեր կամ գոնէ ձեր մեծամասնութեան կողմից ջերմ աջակցութեան կը հանդիպի այդ առաջնակարգ կարևորութիւն ունեցող խնդրի իրագործումը։ Նա հաւատացած է նոյնպէս, որ մեր միացեալ ջանքերով մեզ կաջողվի զուգորդել նրա լուծումը մեր հայրենիքի կուլտուրական զարգացման վերաբերեալ ուրիշ խնդիրների լուծման հետ և միևնոյն ժամանակ պահպանել պետութեան համար այնքան անհրաժեշտ ֆինանսական կայունութիւնը։

Այս վերջին նպատակին հասնելու դըրդում է կառավարութիւնը ձեր յատուկ ուշադրութիւնը դարձնել Դումայի քննութեանը ներկայացված 1913 թւի նախահաշիւը՝ հաւասարակշռված մինչև այժմ չեղած մի գումարով, այն է 3,208 միլիոն րուբլով։

Կառավարութիւնը չէ կասկածում, որ այդ կարևոր գործին դուք կը նուիրէք առանձնապէս ձեր աշխատանքները և ձեռք կառնէք ձեզ համար մատչելի բոլոր միջոցները՝ շուտով աւարտելու նրան։ Առաջիկայ տարվայ ծախքերը նախատեսում են բաւականին յաւելումների յատկացումներ մեր կեանքի ամենաէական կողմերի վերաբերեալ խնդիրներում, և բիւջէի ու նրա հետ կապված յատկացումների հաստատելը ուշացնելը զգալի վնաս պիտի պատճառի պետութեան անյետաձգելի պահանջների բաւարարման գործին։ Կառավարութիւնը միևնոյն ժամանակ տեղին է համարում կըրկնել, ինչպէս որ նա քանիցս արդէն յայտնել է, որ բիւջէտի հաւասարակշռութեան պահպանումը պէտք է հիմք ընդունել պետութեան և նրա վարկի ֆինանսական կայունութեան, որոնցից կախված են արտաքին քաղաքականութեան աջողութիւններն ու ներքին բարեկեցութիւնը։ Այդ հաւասարակշռութեան պահպանութեանը պէտք է ուղղված լինեն բոլոր ջանքերը։

Ութերորդ։ Պետական պաշտպանութեան նշանակութեան մասին արտայայտված ենթադրութիւնները դրդում են ինձ շօշափել թէկուզ մի քանի խօսքով մի այլ հարց, որի վրա լարված անհանգստութեամբ կենտրոնացած է ձեր ուշադրութիւնը, ինչպէս և համայն Ռուսաստանի ուշադրութիւնը (շարժում դահլիճում)։ Նա գամված է Բալկանեան թերակղզու ահեղ դէպքերին, որոնք տեղի են ունենում այն տեղերում, ուր դեռ վերջերս ներկվեց ռուսական արիւնով (շարժում բոլոր աթոռներում)։ Բալկանեան ժողովուրդների ռազմական արիութիւնը և հազուագիւտ միաբանութիւնը չէին կարող չը գտնել ամենավառ համակրանք բոլոր ռուսական սրտերում (բացականչութիւններ՝ «բրաւօ». երկարատև ծափահարութիւն կենտրոնում, նացիոնալիստներից և մասամբ օպպօզիցիայում)։ Ինչպէս մեծ սլաւօնական և ուղղափառ պետութիւն, որ անհամար զոհեր է տուել ի պաշտպանութիւն իր հաւատակիցների և ցեղակիցների, Ռուսաստանը չէ կարող սառնասիրտ մնալ հանդէպ վերջինների ձգտման՝ ձեռք բերելու գոյութեան այնպիսի պայմաններ, որոնք, համապատասխանելով կատարված քաջագործութիւններին, հաստատապէս ապահովեն նրանց կենսական շահերն ու նրանց խաղաղ զարգացումը և վերացնեն ապագայում նոր բարդութիւնների հաւանականութիւնը, որոնք հանապազ վտանգաւոր են եւրօպական խաղաղութեան։ Յիշատակելով մեր պատմութեան լաւագոյն պատգամները և համակերպվելով այդ տեսակէտից ռուսաց հասարակական կարծիքին, Կայսերական կառավարութիւնը չէ կարող ի հարկէ առաջնակարգ նշանակութիւն չը տալ Ռուսաստանի շահերին, որոնց պաշտպանութիւնը կազմում է նրա սրբազան պարտականութիւնը և դնում է նրա վրա ծանր պատասխանատւութիւն։ Նա չէ կարող նոյնպէս չընդգծել գոհունակութեան զգացմունքով, որ ինքը հարկադրված չէ ոչ մի բանում փոխել իր հէնց սկզբից բռնած դիրքը։ Հանգիստ մնալով իր շուրջը կատարվող յուզմունքի ու անհանգստութեան առաջ, կառավարութիւնը ոչ մէկին հիմունք չը տուեց կասկածելու, թէ մենք հետամուտ ենք սեփական մտքումների կամ թէ ցանկանում ենք սուր կերպարանք տալ միջադէպերին, այլ իր գործողութիւնների մէջ կառավարութիւնը ղեկավարվել է սոսկ մի մտքով՝ կանգնել իր պատմական խնդիրների և իր արժանապատւութեան արթուն հողի վրա։ Վաղաժամ կը լինէր նախօրօք ներկայ րոպէին, թէ ինչ ձևով կը լուծվի այս կամ այն առանձին հարցը, բղխող բալկանեան դէպքերից։ Հիմնական սկզբունքները, որոնցով ղեկավարվելու է կառավարութիւնը, երբ ժամանակը գայ վերջնական վճիռ կայացնելու, թելադրվում են մեր բոլորիս անցեալով, ինչպէս նաև նրա և ժամանակակից քաղաքական կացութեան փոխ-յարաբերութեան անհրաժեշտութիւնից։ Չը պէտք է մոռանալ, որ աջողութեան գրաւական միշտ հանդիսանում է ամեն մի խելացի քաղաքականութեան արմատական կանոնը—ձգտել իրական հասանելիքին, չը տարվելով զգացմունքների տարափից։

Հաւատարիմ մեր դաշնակցութեան և միւս մեծ պետութիւնների հետ կապված համաձայնութիւններին և հաւատացած մեր դաշնակիցների և բարեկամների պաշտպանութեանը՝ մենք միևնոյն ժամանակ ոչ մի օգուտ, այլև աւելի անհրաժեշտութիւն չենք տեսնում հակադրել մեծ պետութիւնների մի խմբակցութիւնը միւսին։ Բոլոր այն կառավարութիւնները, որոնք կիջնեն ներկայ քաղաքական դրութեան արմատական հարցերը միասին քննելու հողից, առաջին հերթին մղելով իրանց անմիջական, ես աւելի երկրորդական շահերը, կընդունեն իրանց վրա ծանր բարոյական պատասխանատւութիւն յետագայ միջազգային բարդութիւնների հնարաւորութեան համար։ Մեծ պետութիւնները շատ մեծ հիմք ունեն ձգտելու խափանել վերահաս բարդութիւնների յետագայ զարգացումը մինչև համաեւրօպական խաղաղութեանը սպառնացող սահմանները։

Ռուսաց կառավարութիւնը կարծում է, որ նրանց ոգևորող համերաշխ ջանքերը՝ ուղղված այդ մեծ նպատակին՝ կօգնեն նրանց միջոցներ գտնելու հաշտարար ոգով լուծելու բոլոր այն խնդիրները, որոնք շօշափում են նրանց շահերը և բալկանեան պետութիւնների արդարացի հարցապնդումները։ Նա այդ իսկ պատճառով անկարող էր չողջունել ամենաանկեղծ կերպով անգլիական կառավարութեան նախաձեռնութիւնը, որ առաջարկեց մեծ պետութիւններին միասին նախնական քննութեան ենթարկել պատերազմի վերացման հետ շաղկապված հարցերը, որոնց մէջ այսպէս թէ այնպէս շօշափվում են նրանց շահերը։ Այն համակրական ընդունելութիւնը, որ ցոյց տրվեց եւրօպական մայրաքաղաքներում այդ առաջարկութեան, և արդէն գումարված մեծ պետութիւնների դեսպանների խորհրդակցութիւնը Լոնդոնում պէտք է, ինչպէս մենք յոյս ունենք, դիւրացնեն ներկայ ճգնաժամի խաղաղ լուծումը։ Ռուսաց կառավարութիւնը յոյս է տածում, որ մեր ջանքերին կը վիճակվի՝ Աստուծոյ ողորմութեամբ՝ աջողութեամբ պսակվել և որ ապագայ դէպքերը չեն շօշափի Ռուսաստանի կենսական շահերը, որոնց մենք կոչված ենք պաշտպանելու մեր բոլոր ոյժերով յանուն մեր հայրենիքի պատուի ու արժանիքի։

Իմ այս բացատրութեան վերջում պարտականութիւնս եմ համարում յոյս յայտնել, ես կը կամենայի ասել՝ հաւատ յայտնել, որ չորրորդ Դուման կը ձեռնարկէ քըննելու իրան առաջարկված օրինագծերը առանց կուսակցական դրդումների, այլ թանգագին հայրենիքին ծառայելու միակերպ ցանկութեամբ։ Պարոններ, մեր պետական կեանքի խնդիրները անթիւ են, օրէնսդրական հաստատութիւնների աշխատանքը այդ հարցերի դիմաց միջոցներ ու եղանակներ որոնելու տեսակէտից՝ յիրաւի ընդարձակ է, և այդ աշխատանքը կարող է բեղմնաւոր լինել սոսկ այն դէպքում, եթէ դուք կը մօտենաք նրան ոչ թէ զինված տարաձայնութեան ոգով, այլ ներշնչված այն պարզ գիտակցութեամբ՝ թէ մեր առաջն է բովանդակ մեծ Ռուսաստանը իր անհամար խնդիրներով ու կարիքներով և որ մեզ բոլորիս համար միակ հայրենիքը և նրա վեհափառ Գերագոյն Տնօրինող Թագաւոր Կայսրը սպասում են ձեզանից հանգիստ ու համակերպ աշխատանք, որը միայն կարող է լինել արտադրիչ աշխատանք։ Իմ կողմից ես յայտնում եմ ձեզ, որ կառավարութիւնը պատրաստ է իր բոլոր մտաւոր կարողութիւնը և իր բոլոր ոյժերը նուիրել, որպէսզի օրէնսդրական հաստատութիւնների հետ համերաշխ աշխատանքով ամրապնդէ օրէնքի իմաստով բոլոր այն նախաձեռնութիւնները, որոնք համապատասխան են մեր հայրենի երկրի իսկական կարիքներին ու օգուտներին։

Մինիստրների խորհրդի նախագահի ճառը տևեց մի ժամ 10 րոպէ և յաճախ ընդհատվեց «բրաւօ» բացականչութեամբ ու երկարատև ծափահարութեամբ կենտրոնի, նացիոնալիստների և օպպօզիցիայի մի մասի կողմից։

ԿՈԿՈՎՑԵՎԻ ՃԱՌԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

9 դեկտեմբերի

Բերլին. —Նորդ-Դոյտշէ-Ալգեմայնէ-Ցայտունգը» քննելով ստատս-սեկրետար Կոկովցեվի ճառը, համաձայնվում է «Համբուրգէր-Նախրիխտէնի» հետ, համարելով այդ ճառը խաղաղութեան կարևորագոյն նշան. ի նկատի առնելով Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի դէմ ուղղված յարձակումները, հարկաւոր է Կոկովցևին մատուցած ծառայութիւնը համարել այն, որ նա պարզ կերպով ընդգծեց, թէ Ռուսաստանի համար օգուտ չէր լինի եռապետեան դաշնակցութեանը եռապետեան համաձայնութիւնը հակադրելը։ Այն կարծիքը թէ Կոկովցեվը փրկարար խօսքը չասաց, Բեռլինում չեն ընդունում։

Վիէննա. —«Ֆրեմդենբլատտը» Կոկովցեվի ճառի առիթով ասում է. «Կոկովցեվի արտակարգ ընդունակութիւնները, որպէս ֆինանսների մինիստրի, առատ պտուղներ բերին Ռուսաստանին. խաղաղութեան բարիքները բաժին ընկան Ռուսաստանին լիակատար չափով և Կոկովցեվը բաւարարված զգացմունքով կարողացաւ մատնանշել Ռուսաստանի շարունակ աճող հարստութեան վրա»։ Կոկովցեվի յայտարարութիւնը արտաքին քաղաքականութեան մասին, լրագրի կարծիքով, ընդհանուր առմամբ նոյնանման են միւս պետութիւնների արած յայտարարութիւններին, այնպէս որ կարելի է արձանագրել պետութիւնների միաեռանդ ձգտումը խաղաղութիւնը պահպանելու մասին, միաժամանակ պաշտպանելով իրանց կենսական շահերը։ Մինիստրների խորհրդի նախագահը ոգևորված է ամենաանկեղծ ցանկութեամբ համաձայնեցնելու ռուսական շահերի պաշտպանութիւնը եւրօպական խաղաղութեան շահերին։ Այդ հանգամանքը նորից է հաստատում այն հայեացքի իրաւացիութիւնը, թէ չը նայելով գոյութիւն ունեցող դժուարութիւններին, այնուամենայնիւ կաջողվի բարդութիւնների առաջն առնել։

Պաշտօնական «Միր» լրագիրը ասում է. «Ռուսաց մինիստրի խօսքերը արժանի են յիշատակութեան և լիովին արդարացնում են այն վստահութիւնը, որ տածում են բալկանեան պետութիւնները դէպի Ռուսաստանը ծանր վայրկեաններում։ Բոլգարիան պարծենում է, որ արժանի հանդիսացաւ այն արիւնահեղ զոհաբերութեանը, որ արեց Ռուսաստանը ազատելով Բոլգարիան թիւրքական լծից, ուրից այսօր նա էլ ազատում է իր եղբայրներին։ Ցընծութեամբ թրթռում են բոլգարների սրտերը Կոկովցեվի արած յայտարարութիւնից բոլգարական զինուորական քաջագործութիւնների մասին, լցնելով նրանց սիրտը այնպիսի մի զգացմունքով, որպիսին զգում է ինքնուրոյնութեան հասած որդին։ Մեր թափած արեան հեղեղներից յետոյ,—ասում է «Միր» ամփոփելով,—մեծ պետութիւնների ամեն տեսակ ձգտումը Մերձաւոր Արևելքի հարցի վերջնական արդարացի լուծման դէմ, արժանի է դատապարտութեան։ Բալկանեան դաշնակցութիւնը չի լինի գործիք պետութիւնների այս կամ այն խմբակցութեանը, այդ պատճառով խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւնները փորձութիւն են մեծ պետութիւնների համար, որոնց շահը պահանջում է բարեացակամ օգնութիւն և երաշխաւորումն մեզ խաղաղ կուլտուրական ապագայ, առանց խառնելու մեզ համաշխարհային քաղաքականութեան մեծ պրօբլեմներին»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Աւ. Արասխանեանին թաղելուց յետոյ մի ստուար խումբ յուղարկաւորութեանը մասնակցողներից մօտեցաւ Ղ. Աղայեանի և Գր. Արծրունու գերեզմաններին։ Տեսնելով որ մինչև օրս Աղայեանի գերեզմանը անխնամ է մնացել, որի վրա անցուդարձ են անում սայլեր, խնդրեց երկու հոգու անմիջապէս հոգալ հասարակ ցանկապատ շինել տալու գերեզմանի շուրջը, մինչև մահարձան կանգնեցնելը։

◆ Առաջիկայ ուրբաթ, դեկտեմբերի 14-ին Գրական-Գեղարվեստական Սալօնի հերթական երեկոյթը նուիրվում է Գրիգոր Արծրունուն, նրա մահվան 20-ամեակի առիթով։ Այդ օրը լոյս է տեսնելու բացի «Տարազի» դեկտեմբերի №-ից, որ նուիրվում է Արծրունուն և Արասխանեանին, Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը բազմաթիւ պատկերներով, առանձին գրքոյկով։ Գինը 30 կ.։

◆ Դեկտեմբերի 7-ին կայացաւ Պօտտօյի մահարձանի խնդրով զբաղվող մասնաժողովի առաջին նիստը։ Մասնաժողովի նախագահն է գեներալ Ն. Բարատով, գանձապահը՝ գնդապետ Տօմկեև, գործավարը՝ գնդապետ Դեգով և անդամները ազնուականութեան պարագլուխ իշխ. Պ. Թումանով, գնդապետ իշխան Մելիքով, փոխադարձ վարկի ընկ. կառավարիչ՝ Պասրով, բժ. Բ. Նաւասարդեան, Բէլօզէրսկի, փոխգնդապետ Էսաձէ և կապիտան Կարնիսկի։ Մասնաժողովը արդէն ձեռնարկել է հանգանակութեան։ Հայերի վրա ևս բարոյական պարտականութիւն է ընկնում նպաստել յիշեալ հանգանակութեանը ի նկատի ունենալով այն անաչառ և բարեխիղճ վերաբերմունքը, որով հանգուցեալ պատմաբանը մօտեցել է հայերի մասնակցութեանը Կովկասը գրաւելու պատերազմում։

◆ Դեկտեմբերի 8-ին Չերքէզովսկայա փողոցում գաղտնի ոստիկանութեան անդամների ձեռքով սպանվեց յայտնի աւազակապետ Սղնախի գ. բնակիչ Գիօրգի Օսիպովը՝ 25 տարեկան, մականուանեալ «Գիգուցա», որ կատարել է բազմաթիւ տէրրօրիստական ակտեր, դրամաշորթութիւններ և այլն։ Սպանվածի մօտ գտնվեցին 256 ր. կանխիկ դրամ, կեղծ անցագիր, 10 փամփուշտով ատրճանակ, որոնցից երեքը արդէն արձակել էր, «Մաուզէր» ատրճանակ և 192 փամփուշտ փամփուշտակալով։ Ձերբակալվեց աւազակապետի ընկեր Թիֆլիսեցի Ալէքսանդր Մանվելիձէ՝ փականագործ, որը իր արհեստանոցից կրակում էր ոստիկանական պաշտօնեաների վրա։

◆ «Т. Л.»-ը հաղորդում է, որ Թիֆլիսի վաճառականների ժողովում որոշվել է շնորհակալութիւն յայտնել խուզարկու ոստիկանութեան պետ Գագիէվին, որի եռանդուն գործունէութեան շնորհիւ վերջերս համարեա վերջացել են դրամաշորթութիւնները, որոնց զոհ մեծ մասամբ լինում էին վաճառականները։ Գագիէվը պարգևատրվել է 4-րդ կարգի Վլադիմիրի շքանշանով։

◆ Կովկասի փոխարքան թոյլատրել է խաղալ ռուսերէն «Հիպնոզի ոյժը» կոմ. 3 գործ. հեղ. Ժիգալկոյի և վրացերէն «Ցուգայի համբոյրը» 4 գործ. թարգմ. Շումալաձէի։

◆ Երէկ «Լօնդօն» հիւրանոցում տրվեց ճաշ երկրագործութեան դեպարտամենտի կովկասեան լիազօր Աբխազովի Թիֆլիսից մեկնելու առիթով։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ շուտով բացվելու է հայ երաժշտասէրների ընկերութիւնը, որին կարող են անդամակցել բոլոր ցանկացողները տարեկան 3 ր. վճարով։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի տեղեկութիւնների համաձայն նոյեմբեր ամսում եղել են 99 յանցագործութիւններ։

◆ Դեկտեմբերի 8-ին Թիֆլիսի պանդոկներից մէկում Իօսիֆ Եգօրովը վէրքեր հասցրեց դանակով՝ վրէժխնդրութիւնից դրդված՝ Նոր-Բայազէտի գաւառի Բլանովկա գիւղացի Աբրամ Կատուշինին։ Ցանցաւորը կալանաւորված է։

◆ Վրաց հանգուցեալ բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի մահարձանը համարեա պատրաստ է և շուտով կը կատարվի նրա բացման կարգը։

◆ Սկսած 1906 թ. դեկտ. 15-ից մինչև 1912 թ. դեկտ. 1-ը Թիֆլիսում կառուցվելիք պոլիտեխնիկական ինստիտուտի համար հանգանակված է ընդամենը 34,313 ր. 28 կ.։

◆ Բագուի քաղաքապետը թոյլատրել է Տալակվաձէին հրատարակել գրական-քաղաքական շաբաթաթերթ «Ծղարօ» (Աղբիւր) անունով, որ լոյս է տեսնելու 1913 թ. յունվարի 1-ից։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բելգրադից հաղորդում են, որ աւստրիական դեսպանը իտալական և գերմանական դեսպանների հետ խորհրդակցելուց յետոյ պահանջեց հեռացնել սերբիական զօրքերը Դուրացցոյից։ Պաշիչը մերժեց։

◆ «Рѣчь»-ը հերքում է այն տեղեկութիւնը, թէ զինուորական մինիստրը հրաւէր ստացաւ գերմանական կայսրից։ Մինիստրը դեկտեմբերի 12-ին մեկնում է Լայպցիգ ներկայ լինելու ուղղափառ տաճարի հիմնադրութեան։

◆ Աբդիւլ-Համիդի օրօք պաշտօնավարող բոլոր մինիստրները, ինչպէս հեռագրում են Կ. Պոլսից, պահանջում են տալ իրանց նախկին պաշտօնները։ Աւստրիան Ալբանիա ուղարկեց 36,000 հրացան։

◆ Մահմուդ-Շեվքէթ-փաշան, համաձայնելով ստանձնել զօրքերի հրամանատարութիւնը պատերազմի դաշտում, խորհուրդ տուեց սուլթանին ձգձգել հաշտութեան բանակցութիւնները մինչև որ կը կազմվի թիւրքական 300,000 մարդուց բաղկացած զօրաբանակ պատերազմը նոր թափով վերսկսելու համար։

◆ Բրիւսէլում գումարվելու է երիտասարդ-թիւրքերի կոնֆերենցիան։

◆ Բրիւսէլում սօցիալիստները միտինգներում խօսում են յօգուտ ռուս-գերմանական պատերազմի, որ ժողովրդական կը լինի Գերմանիայում։

◆ Վարշավայում Ծնդեան օրերում սպասվում է հրէական ջարդ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

10000 ՌՈՒԲԼԻ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ես 10,000 րուբլի կը վճարեմ Ձեր սիրած որևէ բարեգործական հիմնարկութեան, եթէ կապացուցվի, որ ներկայ կարծիքներից մէկն ու մէկը չէ համապատասխանում օրիգինալին։

Բժ. Ս. Վօլին. Մօսկվա։ ...«Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը» ոչ միայն ժամանակաւորապէս անհետացնում է կալութիւնը, այլ և միանգամայն բուժում է նրան։

Բժ. Իւրգէնս. ՍՊԲ. ... Ստամոքսադումի ժամանակ հետևանքները հրաշալի են։

Բժ. Վ. Գրիգօրովիչ. Սեվաստօպօլ։ ...Աղիքների քրօնիկ. կատարի ժամանակ ամենալաւ ներգործութիւնն է անում և ցաւեր չէ առաջացնում։

Բժ. Բիրկին. Սամարա։ ...Կարճժամանակեայ (3 շաբ.) գործածութիւնից յետոյ թեթևութիւն զգացվեց, իսկ առաջներում լուծողականների ամենամեծ բաժինն անգամ անհետևանք էր մնում։

Բժ. Ցվետայեվ. Լիպեցկ։ ...Փորի ուռված լինելը, կրծոսկրի տակ ծանրութեան զգացումը, թանչոցը և ստամոքսի տաքը նուազել են։ Բնական կատարումը շատ հեշտ։ Մայասիլը չէ անհանգստացնում։ Կոշտերը այլ ևս դուրս չեն գալիս։

Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը միանգամայն անվնաս է։ Բուժումը տեղի է ունենում կատարեալ։

ԴԵՂԱՏՈՄՍԸ

Մօտակայ դեղատնից կամ դեղավաճառանոցից վերցրէք 2 շաբաթվայ գործածութեան համար Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնից մի արկղիկ, ընդունեցէք քնելուց առաջ 2 տաբլետկա և առաւօտեան Դուք կունենաք դիւրին և միանգամայն նորմալ բնական կատարումն։ Յետոյ ընդունէք 1—2 տաբլետկա օրական 3 անգամ, մինչև որ Ձեզ մօտ մարսողութիւնը նորմալ դրութիւն կը ստանայ։ Մանրամասն ցուցումները և առողջական ծոմապահութեան համար օգտաւէտ կանոնները կցված են իւրաքանչիւր ծրարին։

ՓՈՐՁԵԼԸ ՁՐԻ

Գրէք ինձ մի բացիկ և ես իսկոյն կուղարկեմ Ձեզ նմուշը ձրի։ Իմ հասցէն՝ Д-ръ Мед. Антонъ Мейеръ. Химич. Лабор. Отд. А., С.-Петербургъ, Екатерининскій кан., 29—3.

(4,11,18) (П. 157985) 4 3

№4711 ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
Ընկուզեայ էկստրակտից

Ներկում է մազերը արագ և հիմնաւոր, նայած ցանկութեան, բնքոյշ շիկագոյնից սկսած մինչև կատարեալ սևը։ Անվնասակար լինելը երաշխաւորված է։
Մի սրուակը 1 ր. 20 կ.։ Մեծադիրը 2 րուբ.։

Պարֆիւմէրիա № 4711 Ֆերդ. Միւլգէնս
Մատակ. Նորին Մեծութ. Ռուսաց Բարձր Դրան
ԿԵՕԼՆ Բ. վ. ● ՌԻԳԱ
Հիմնված 1792 թ.



(М. 309206/309233) 10—10

ՓՈՒՌԸ

իր բոլոր պատկանելիքներով տրվում է վարձով։ Հարցնել դռնապանին, Միքայէլեան փողոց № 165.

921. 1—1

---

*) Տես «Մշակ» № № 272, 273 և 274.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթեւեկութիւն)

Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.: **Պոստատար գնացքը** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.: **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 2 ր. գիշ., հասնում է Միխայլովո 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.: **Պոստատար գնացքը** № 3—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլովո 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլովո 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլովո 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 25 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստատար գնացքը** № 43—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրոպոլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրոպոլ 12 ժ. գիշ., Էջմիածին 5 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 6 ժ. 51 ր. առաւ.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 6,5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրոպոլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 45 ր. առ.:

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Տօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 1—9 ժ. 10 ր. եր., **Պոստատար գնացքը** № 3—9 ժ. առ.: **Մարդատար գնացքը** № 5—3 ժ. 46 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—3 ժ. 8 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացքը** № 12—8 ժ. 50 ր. առ., **Պոստատար գնացքը** № 4—11 ժ. 32 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 6—5 ժ. 15 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 106—5 ժ. 15 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստատար գնացքը** №40,3—8 ժ. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 6К. 5—1 ժ. 28 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8Э,7—5 ժ. 28 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:

Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին նեարդային:

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:

Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՈՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:

ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ԹԵՆԻԳԵՐ-ԱՐԵՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:

Ջ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**

1. 0—112

ՎԵՐՋԻՆ ՄՕԴԱՅԻ

ձեռագործ արծաթեայ-ոսկեզօծ սաթ [illegible]

ՔՈՐՈՑՆԵՐ

կանանց գլխարկների համար:

Վաճառվում են Մամասախլիսօվի և Գալուստեանի խանութում, Երևանեան հրապարակի վրա, «Կավկազ» հիւրանոցի ներքև:

Ինձ մօտ, Մկ. Մալխասեանցի խանութում, Արմեանսկի բազար, պատրաստում եմ ամեն ձևի շքեղ բրոշկեր, գլխարկի և հալստուկի քորոցներ, բռօշկաներ և այլն, շատ ձեռնտու գներով: Փորագրում եմ ամեն տեսակ նկարներ արծաթի և ոսկու վրա:

Վանի ոսկերիչ՝ Հայկ **Բէջիշեան**

(օ. մ.) 919. 6—1

Բացված է առաջիկայ 1913 թ.

„ԱՂԲԻՒՐԻ“ 31-րդ տարեշրջանի և „ՏԱՐԱԶԻ“ 24-րդ տարեշրջանի բաժանորդագրութիւնը՝ 25 յաւելուածներով եւ պրէմիաներով, որոնցից 15-ը տրվում են Նոր Տարվայ № № ի հետ, իսկ Թիֆլիսում հէնց բաժանորդագրվելիս: „ԱՂԲԻՒՐԻ“ և „ՏԱՐԱԶԻ“ տարեկան բաժանորդագինը բոլոր 25 յաւելուածներով և պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.), նոյնը դպրոցական աշակերտների համար 5 ր.

ԱՄԱՌՈՒԿ ԵՒ ՄԱՍ ՄԱՍ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“. „Таразъ“. Tiflis. Direction „Agbur“-„Taraz“.

0—5

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշուապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների:

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով:

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշուապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ իրագամն կրկնակի իտալական սիստեմով և առևտ. թւաբանութիւն, առևտ. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն:

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Րեմինգտօնի վրա գրել:

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին:

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ:

Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից: Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը: Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար: Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44.

(կ. հ. ե.) 916. 0—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ

Վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդութիւնների:

Առաւօտեան ժամը 10—12-ը և երեկոյեան ժամը 6—8-ը

Միքայէլեան փողոց, № 27.

(ա. օ.) 837. 25—22

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների: Էլեկտրաբուժութիւն:

Ընդունելութիւնը ամեն օր (12½—2 ժ. ցերեկվայ: 5—7 ժ. երեկոյեան: Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի): Տէլէֆօն № 1175.

(օ. մ.) 377. 100—50

АНУЗОЛЬ

МАРКА УТВЕРЖД. ГЕДЕКЕ и К°. ПРАВИТ. № 4530.

ПРОСИМЪ ОТВЕРГАТЬ ПОДДѢЛКИ И ВСЯКІЯ ПОДРАЖАНІЯ И ТРЕБОВАТЬ ТОЛЬКО НАСТОЯЩІЯ СЪ ОХРАН. КЛЕЙМОМЪ СЪ ТАМОЖ. ПЛОМБОЙ РУССКАГО ПРАВИТЕЛЬСТВА.

СВѢЧИ

АНУЗОЛЬ

ГЕДЕКЕ и К°.

РЕКОМ. ДЛЯ БЫСТРАГО, УДОБНАГО И БЕЗБОЛѢЗНЕННАГО ИЗЛѢЧЕНІЯ

ГЕМОРРОЯ

Это испытанное, благотворно-дѣйствующее средство признано врачами за лучшее. Цѣна 1 р. 75 к.

Продажа въ аптекахъ и лучш. аптекар. магазин.

ПРЕДСТАВИТЕЛЬ ВЪ РОССІИ пров. Э. ЮРГЕНСЪ.

Волхонка, МОСКВА.

М. (10873) 12—12 (10.)

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն առնվում են ռէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (րեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաններին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից):

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ե. հ. կ.) 687 0—5

ЕСЛИ ВЫ ЗА НЕБОЛЬШІЯ ДЕНЬГИ ХОТИТЕ ИМѢТЬ

для себя или Вашихъ дѣтей много хорошихъ книгъ, дающихъ возможность пополнять образованіе и способствовать саморазвитію, знакомящихъ со всѣми новинками науки, литературы и современной цивилизаціи, дающихъ серьезныя и полезныя на практикѣ свѣдѣнія; если Вы хотите знать все, чѣмъ интересуется міръ, правду о русской жизни и политикѣ, то выпишите извѣстный, всегда выполняющій свои обязательства (издается одиннадцатый годъ) журналъ

(Редакторъ-издатель В. В. БИТНЕРЪ)

ВѢСТНИКЪ ЗНАНІЯ

8 р. безъ перес. 9 р. съ перес. въ годъ

Въ 1913 году подписчики „Вѣстн. Зн.“ получаютъ:

52 №№

еженед. иллюстр. газеты-журнала

НЕДѢЛЯ

„ВѢСТНИКА ЗНАНІЯ“, знакомящей со всѣмъ совершающимся на свѣтѣ (политика, міровыя событія, новости литературы) и освѣщающей народныя нужды. Главная задача „Недѣли“—не скрывать правды отъ народа. Въ „Недѣлѣ“ даются подписчикамъ безплатно юридическіе, образовательные и др. совѣты. (Можно „Недѣлю“ выписывать и отдѣльно отъ „Вѣстн. Зн.“ Цѣна въ годъ 3 р., четверть года 75 к.).

12 книгъ „Вѣстн. Знанія“, ежемѣсячнаго иллюстрированнаго журнала, въ общедоступной формѣ знакомящаго съ прогрессомъ человѣчества.

Отдѣлы: естественно-научный, историко-географическій, соціально-экономическій, философіи, математики, психологіи, педагогическій, литературно-художественный (съ отдѣльными цвѣтными картинами), критическій, сельско-хозяйственный, новыхъ изобрѣтеній, юридическій, медицинскій, познанія Россіи, популярно-научный, одинаково интересный взрослымъ и дѣтямъ старшаго возраста. Сотрудники журнала и приложеній—профессора и извѣстные литераторы—дѣлаютъ „Вѣстникъ Знанія“ единственнымъ дѣйствительно научнымъ, но популярнымъ журналомъ.

Въ приложеніяхъ къ „Вѣстн. Знанія“ дается цѣлая библіотека по всѣмъ отраслямъ знанія:

„ДЕСЯТЬ ЛѢТЪ КУЛЬТУРНОЙ РАБОТЫ“. Альбомъ портретовъ и картинъ, виды и проч. съ описан. (Это приложеніе получатъ только подписавшіеся не позже января).

ИЛЛЮСТРИР. ИСТОРІЯ УКРАИНЫ, проф. Грушевскаго, въ 4 выпускахъ.

ЛЕКЦІИ ПО ЕСТЕСТВОЗНАНІЮ И ФИЛОСОФІИ, проф. Геккеля.

ОБЩЕСТВЕННО - ЭКОНОМИЧЕСКІЕ ИДЕАЛЫ НАШЕГО ВРЕМЕНИ, проф. М. И. Туганъ - Барановскаго.

ГИГІЕНА ДУХА. Физіологія мозга. Гигіена ребенка, мужчины, женщины. Половой вопросъ и проч., проф. Клестона съ дополненіями проф. Фореля, въ 2 вып.

ЭКСПЕРИМЕНТАЛЬНАЯ ФИЗИКА, проф. Бернштейна.

ПСИХОЛОГІЯ И УЧИТЕЛЬ, д-ра Мюнстерберга или др.

СОЧИНЕНІЯ ЛОПЕ-ДЕ-ВЕГА: „Доротея“, „Любовь и честь“.

КАВКАЗСКІЙ ЛИТЕРАТУРНЫЙ АЛЬМАНАХЪ.

ЛАТЫШСКІЙ ЛИТЕРАТУРНЫЙ АЛЬМАНАХЪ.

Сверхъ того, подписчики, въ зависимости отъ избраннаго ими абонемента (при подпискѣ указывать № абонемента), получатъ слѣдующія капитальныя сочиненія:

1-й абонементъ: 12 выпуск. иллюстрированной біографической библіотеки

ВЕЛИКІЕ ЛЮДИ,

жизнеописанія знамен. людей всѣхъ временъ и народовъ со статьями по экономикѣ, политикѣ и пр. проф. М. Ковалевскаго, проф. Туганъ-Барановскаго и др. Много рисунковъ и отдѣльныхъ цвѣтныхъ картинъ.

Сочиненія И. ДАРВИНА:

Кругосвѣтное путешествіе на кораблѣ Бигль. Въ 4 выпускахъ, съ рисунками.

2-й абонементъ: въ 16 выпускахъ

МІРОВАЯ ЛИТЕРАТУРА,

соч. д-ра К. БУССЕ.

Литература китайцевъ, японцевъ, египтянъ, индусовъ, персовъ, евреевъ, арабовъ, грековъ, римлянъ, кельтовъ, германцевъ, возрожденія Италіи, Англіи, Франціи, Испаніи и др. Литература славянъ: чеховъ, поляковъ, русскихъ, болгаръ и др. Роскошное изданіе со многими рисунк. и около 60 отдѣльныхъ картинъ и хромотипій.

3-й абонементъ: въ 16 выпускахъ

КНИГА ПРИРОДЫ

и ЧЕЛОВѢЧЕСКОЙ КУЛЬТУРЫ.

Солидн. трудъ въ 9 част.: ч. I и II. Пространство и время, бар. Швейгеръ-Лерхенфельда; ч. III. Мельница жизни, проф. Оствальда; ч. IV. Колыбель жизни, проф. Шенихена; ч. V. Обитаемые міры, проф. Мейера; ч. VI—IX. Психологическ. эволюція человѣчества, проф. Вундта. Роскошн. изд., около 600 рис. и 60 отд. картинъ и хромотипій. (Въ книжн. магаз. будетъ стоить 15 руб.).

4-й абонементъ: 12 выпусковъ

СВОДЪ ЗАКОНОВЪ.

4 вып. ПРАКТИЧЕСКОЙ ЭНЦИКЛОПЕДІИ (руководство по ремесламъ, хозяйству, домоводству, полезные рецепты и проч.). Въ 1913 г. въ этомъ изданіи будетъ дана книга

ПРАВА РУССКАГО ГРАЖДАНИНА,

какъ ихъ опредѣлять, какъ ихъ осуществлять, какъ ихъ отстаивать. Съ образц. прошен. и пр. Сост. прис. пов. П. А. Брюнелли.

5-й абонементъ: въ 16 выпускахъ

ИЛЛЮСТРИРОВАННАЯ

ИСТОРІЯ РЕЛИГІЙ,

съ древнѣйш. временъ до нашихъ дней, проф. Шантепи-де-ля-Сосей. Роскошное изданіе, около 600 рис. и 60 отдѣльныхъ картинъ и хромотипій. (2 большихъ тома).

ПРЕМІЯ: Вносящіе всѣ деньги до января имѣютъ право на премію книгами на 2 руб. (по особому каталогу), уплачивая лишь за пересылку. Каждый подписчикъ, доплачивая 4 р. 50 к. (за гран. 6 р.) можетъ получить сочиненія, входящія въ любой изъ абонементовъ, сверхъ того, который онъ выбралъ.

(Ц. 151254)

ПОДПИСНАЯ ЦѢНА на „Вѣстн. Зн.“ съ газетою „Недѣля“ и всѣми прилож. (необходимо точно указывать, какой абонементъ) въ годъ 8 р., съ перес. 9 р., за гран. (черезъ загран. почтамты) 12 р. Разсрочка: при подп. 3 р., 10 марта, 10 іюня, 10 августа—по 2 р. ПОДРОБНОЕ ОБЪЯВЛЕНІЕ БЕЗПЛАТНО.

Адресъ: С.-Петербургъ, Невскій пр., 40, Контора „ВѢСТНИКА ЗНАНІЯ“.

---

23 ԱՐԺԷՔԱՒՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ 3 ր. 45 կոպ.

1) Ցրամ. գրպ. էլեգանտ և մաքուր ժամացոյց «ԱՆԿԵՐ» (ոչ ցիլինդր) անգլ. սև պողպատից, 15 քարով, «ԽՐՕՆՕՄԷՏՐ» սիստ., 36 ժամը մի անգամ լարումով, ստուգված մինչև րօպէները, 8 տարի երաշխաւորութեամբ: 2) Նիկկլէ շղթայ: 3) Բրէլօկ-կինէմատոգր. պիկանտ տեսարան. կամ թէ կօմպաս: 4) Այծեմաշկի քսակ ժամաց. փչանալուց պահպանելու համար: 5) Ձքեղ մատանի «Duble» պարիզեան քարով: 6—9) Գրպանի տուալէտային նէսէսէր 4 հետաքրք. առարկ.: 10) Ժամաց. զողերից պահպանող իր: 11) Պարիզեան «Պլաստօգրաֆ», որ ցոյց է տալիս ամեն տեսարաններ: 12—17) 6 հատ շատ հետաքրքր. նկարներ «Պլաստօգրաֆի» համար: 18) Գրպանի նիկէլ. գրելու պերօ: 19) Արծաթազօծ գեղ. լուցկատուփ: 20) Գրպանի ծալվող մկրատ անգլ. պողպատից: 21) Ծոցային տպարան բաղկ. մօտ 100 տառից և թւանշ.: 22) Լիակատար պիրօր տպարանի համար: 23) Կաշուի նոր-մօդայի պորտմօնէ 6 բաժան., շատ ամփոփ և յարմար՝ դրամներ պահելու համար: Ամբողջ գարնիտուրի գինը **3 ր. 45 կ.**, 2 գարն. **6 ր. 45 կ.**, նոյնօրինակ գարն. բարձր տեսակի առարկաներից և սափակ ժամացոյցով **4 ր. 45 կ.**, 2 գարն. **8 ր. 45 կ.**: Փակ ժամացոյց կամ կանացի՝ բոլոր յաւելուածներով՝ 1 ր. թանկ: Ճանապարհածախսը **40 կ.**, Սիբիր՝ **75 կ.**: Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց կանխավճարի: Ձրի հետաքրքրական պրէմիա 8 ր. արժողութեամբ: Հասցէագրել՝

Т-во „ПАТЕНТЪ“. ВАРШАВА. Св. Креста № 48. Отд. 69.

(ե.) (В. 61357) 7—6

Լոյս տեսաւ „ԱՐԱՐԱՏ“ ամսագրի

հոկտեմբերի-նոյեմբերի միացեալ համարը.

«Պաշտօնականք»: «Հայոց կենդանի», Ն. վ. Տ.-Մ.: «Կաթողիկոսի անուանակոչ. և Միւռոնօրհնութիւնը», Աւ. Հ.: «Տառ. գիւտի 1500-ամեայ և տպագր. 400 ամեայ յոբ. բացումը», Աւ. Հ.: «Նորամուտ եկեղեց. ծէսերի մասին», Ս. Ք. Սարգսեան: «Մեթօդի անբաւ. ուսուցման ժամանակ», Գ. Էդիլեան: «Կենսութիւնը և փոխադրութիւնը Գերմանիայում», Մար. Ցարութիւնեան: «Մոնղոլների տեսքը, սովոր., կրօնը», Գ. Ալթունեան: «Արեւելեան հարցի գլխաւոր էտապները», Գ. Ալթունեան: «Ազգայի հաստատութ. հայ. եկեղեց. մէջ», Գ. վ. Յովսէփեան: «Ուրուագծեր հայ. գրակ. պատմ.», Մ. Աբեղեան: Գրախօսութիւն: «Ակնարկ բարբառ.», Մ. վ. Մաքսուտեան, Մ. Աբեղեան, Ց. Տ.-Միքայէլեանի: «Մեթօդ. գործն. ցուցմունք», Գ. Էդիլեան, Էլ. Մայէր «Պատմ. տես. խնդիրներ», Գ. Էդիլեան: «Մի օրինակելի հաստատութիւն», Մ. վ. Պ. Մ.: «Հայրենի աւերակներ», Գ. Ալթունեան: «Եկեղեցական քրօնիկօն»: «Մայր Աթոռ»: «Խմբագրութեան կողմից»:

914. 1—1

ԲԱՑՎԱԾ Է 1913 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ“

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Հինգերորդ տարի:

1913 թւին «Գիւղատնտեսը» դուրս է գալու երկու շաբաթը մի անգամ:

«Գիւղատնտեսը» 1913 թւի իր տարեկան բաժանորդներին տալու է հետևեալ ԳՐՔԵՐԸ, որպէս ձրի յաւելուած.

ա) «Երկրագործական գործիքների ընտրութիւնը» (պատկերազարդ):

բ) «Քրքում և նրա մշակութիւնը»:

գ) «Եղջիւրաւոր անասունների հիւանդութիւնները և դրանց հոգատարութիւնը» (պատկ.):

դ) «Պողատու պարտէզ գցելը» (պատկերազարդ):

ե) «Ի՞նչպէս ստանալ լաւ սերմացու» (պատկերազարդ):

զ) «Սպառողական ընկերութիւն և նրա խանութը»:

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» ԲԱԺՆԵԳԻՆԸ ԻՐ ԲՈԼՈՐ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ

Ռուսաստանում		Արտասահման	
Տարին	3 րուբլի	Տարին	4 րուբլի
Կէս տարին	2 րուբլի	Կէս տարին	2 ր. 50 կ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Гюхатнтесъ“, կամ Tiflis (Russie), Réd. „Guchatntess“.

«Գիւղատնտեսի» տարեկան բաժանորդները «ՆՈՐ-ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ» երկշաբաթաթերթ ստանալու համար վճարում են միայն 1 րուբլի:

(ե.) 877. 7—2

Լոյս տեսաւ եւ վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ

1913 Թ.

„ՇԻՐԱԿ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

XV տարի

250 պատկ.—ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ.—250 պատկ.

Պատի օրացոյցի առաջին երեսների վրա տպագրված են հայ և օտար, հին և նորագոյն հեղինակների և գործիչների պատկերներ: Երբ պետական և գիւղացական հիմնարկութիւնները ազատ են պարապմունքից, առանձին նշանակված են փօստի պարապմունքի ժամերը և փօստի բոլորովին փակ օրերը: Իւրաքանչիւր երեսի վրա տպագրված են **աֆօրիզմներ, բնիկ մէրեր, առածներ, պատմական դէպքերի ժամանակագրութիւն, բանաստեղծական հատւածներ, մեծ մասամբ իրանց հեղինակների պատկերներով:** Երկրորդ երեսների վրա տպագրված են՝ գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների նկարագրութիւններ, հայկական տօների պատմական բացատրութիւններ, հեթանոսական սովորութիւններ, բժշկական գիտելիքներ, առողջապահական խորհուրդներ, ազգագրական տեղեկութիւններ, զուարճալի պատմուածքներ, պատմական նշանաւոր դէպքեր հայ, ռուս և այլ ազգերի կեանքից, վիճակագրական թւեր և տեղեկութիւններ, խորհրդածութիւններ և կենսագրութիւններ նշանաւոր անձանց, բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր, զուարճալի անեկդօտներ մեծ մարդկանց կեանքից: Գիւղատնտեսական նորութիւններ, տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ: Ժողովրդական երգեր, երգիծաբանական հատուածներ, ծիծաղաշարժ առարկաներ առածներ, և այլն:

Ցախտակը պատրաստված է լիտօգրաֆիայում 10 գոյնով և նուիրված է հայ տառերի 1500 և հայ տպագրութեան 400-ամեայ մեծ յոբելեաններին: Աջ ու ձախ կողմերում ս. Սահակի և Մեսրոպի պատկերը, կենտրոնում, Մասիսի ստորոտում, ս. Էջմիածինը, ներքևում, ձախ կողմը գուտտենբերգեան մամուլը, աջում գիտութեան և գեղարուեստի էմբլէմները: Մի գեղեցիկ յիշատակ երկու մեծ ազգային տօների յաւերժացման, որը ցանկալի զարդ կարող է համարվել ամեն մի հայ տան համար: Երկրորդ նկարը հայի պատմական անցեալից՝ Սաթենիկ և Արտաշէս: Պատի օրացոյցի թերթերը ամրացված են թիթեղեայ կողով (жесть) և կարված երկաթէ թելով. Թերթերը ծակծկված են հեշտ պոկելու համար:

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ

Ցանկը: Բովանդակում է **կարևոր գիտելիքներ.**—Մուրհակներ, չափ և կշիռ, դրամներ և արժէքաւոր թղթեր: Փօստ և հեռագիր, խնայողական գանձարաններ, բնակարանի հարկ, կտակի և պայմանի օրինակներ: **Վիճակագրական.**—Ռուսաստանի ազգաբնակութիւնը, նրա աճումն ու խտութիւնը, կեանքի միջին հասակը, ազգերի թիւն ըստ հասակի, դաւանութեան և պարապմունքի: Գաղթականութիւն: Ժողովրդական կրթութիւնը, նրա ծախսերը, գրագիտութեան չափը, դպրոցներ: Զօրքը, պետութիւնների զինուորական ույժերը և նրանց ծախսերը: Ժողովրդի առողջապահական վիճակը: Պետական ել և մուտքը: **Բժշկական փոքրիկ զրոյցներ.**—Ամուսնութեան պատմութիւնը, Կամքի ույժը, Մտքերի սանձահարումը, Մտքերը գործում են, Զգացմունքները և հոգու խորութիւնը, Ուխտագնացութեան օգուտները, Ալկոհօլը և իր չարիքները, Մարմնի մաքրութիւնը, Աղի կերակրի վնասակարութիւնը, Շաքարի օգուտները, Մեղրի բուժիչ յատկութիւնը, Առողջապահական մտքեր, Բժշկական ճշմարտութիւններ: **Գիտական նորութիւններ.**—Վարակիչ կենդանիներ, սեռական փոփոխութիւններ: **Կօօպերացիա.**—Սպառողական կօօպերացիա, կօօպերատիվ քաղաք, կօօպերատիվ ցուցահանդէս: **Աստղաբաշխական.**—Ընդարձակ տեղեկութիւն գիսաւորների մասին, յայտնի աստղաբաշխների պատկերներով: **Պատմական.**—Քրիստոսի կենդանագիրը: **Բանաստեղծական.**—Պատւ է մեր հողագունդը՝ ս. Պալեանի, Նոր-կեանք՝ Բալասանեանի, Բրահմինների հովիտը Կրումմախէրի, Կինը, Ո՞րն է աւելի բարձր, Հրէական լեգենդ, Քոյրերը Լ. Տոլստոյի, Բարեկամը, Օսկար Ուայլդի, Դեմի-Ղայա, Կուպրինի: **Կեանքի ծրագիրներ.**—Զուարճութիւն, Աշխատութիւն, Գաղտնապահութիւն, Ամերիկացու հաւատամքը, Բեկլըի նամակը: **Գրաբանութիւն.**—Ինչից ճանաչել մարդու բնաւորութիւնը: **Հայերէն մէրեր.**—Սէրը, Որդիական, Մայրական, Հայրական սէր, Սիրտ, Գեղեցկութիւն: **Ճանապարհորդական.**—Երկաթուղիք, շոգենաւեր և պօստային ճանապարհներ: **Զուարճալիք.**—Խնդիրներ, Վիճակաբան:

ԱՌԱՆՁԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ.—Հայ տառերի 1500 և հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանը, գործիչների 18 պատկերներով: Երեսների թիւը 320.

Գները պատինը 50 կոպ., ծոցինը 20 կոպ.: Քանակով գնողներին զեղչ: Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկեն կանխավճար:

Դիմել՝ Александрополь, Типографія „Ширакъ“ Карапету Апинянъ. Արտասահմանից Alexandropol, Karapet Apinian (Caucasse).

Ցանկացողներին օրացոյցների բովանդակութիւնն առանձին տպագրված թերթով կուղարկվի ձրի:

(ե.) 833. 5—5

1913 թ. յունվարի 1-ից հրատարակվելու է իրօք անկուսակցական, պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ԱՐՓԻ“ն որ տալու է տարվայ ընթացքում 50 ՀԱՄԱՐ և 12 ԳԻՐՔ: «ԱՐՓԻՆ» ունենալու է գրականութեան բոլոր բաժինները, պատկերներ և նկարներ առօրեայ կեանքից, զաւեշտական բաժին ծաղրանկարներով, նորութիւններ ամբողջ աշխարհից:

Տպվելու է սեփական «ԷՍՊԵՐԱՆՏՕ» տպարանում, լաւ թղթի վրա եւ լաւ տեսակի մուրով:

«ԱՐՓԻԻ» յաւելուածները լինելու են գրքերով և 12 գրքի մէջ կը տրվի մանրամասն «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» մինչև 1913 թ.:

«Հայոց պատմութիւնը կազմել է Հա. և Տէր-Աստուածատրեանցը համաձայն հայ և օտար աղբիւրների և գիրքը ունենալու է 800 էջ և 200 ից աւելի պատկերներ և քարտէզներ:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝

Ռուսաստանի համար միմիայն 3 ր., 6 ամիսը՝ 1 ր. 75 կ.

Պարսկաստան տարեկան 6 րուբլի:

Թիւրքիա և այլ երկիրներ՝ 15 ֆրանկ:

Ամերիկա՝ 3 դոլլար:

Առանց յաւելուածների բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Բաժանորդ կարելի է գրվել միմիայն խմբագրատանը՝ Թիֆլիս, տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ», Ելիզաւետինսկայա փողոց, № 17. Тифлисъ, редакція журнала „АРПИ“ (Типографія „Эсперанто“). Tiflis, Redakcio de gazeto „ARPI“ (Presejo „Esperanto“).

(ա. օ.) 904. 5—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лоисъ-Меликовская улица, домъ казенный